

Հավելված
Հայաստանի Հանրապետության Լոռու
մարզի Սպիտակ համայնքի ավագանու
2017 թվականի փետրվարի 28-ի N 9-Ն որոշման

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
Լ Ո Ռ ՈՒ Մ Ա Ր Ձ**

**ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ
2017-2021 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ
ԶԱՐԳԱՑՄԱՆ
ՀՆԳԱՄՅԱ ԾՐԱԳԻՐ**



ԿԱԶՄԵԼ Է ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Գ.ՍԱՀԱԿՅԱՆ

ՀԱՍՏԱՏՎԵԼ Է ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 28-Ի N 9-Ն ՈՐՈՇՄԱՄԲ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

1. ՀԱՄԱՅՆՔԻ ԻՐԱՎԻՃԱԿԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ

1.1 Աշխարհագրական դիրքը, պատմական համառոտ ակնարկ.....	6
1.2 Պատմական և մշակութային արժեքներ.....	8
1.3 Ժողովրդագրություն և սոցիալական կազմ.	11
1.4 Տեղական ինքնակառավարման մարմիններ.	13
1.5 Սպիտակ համայնքում գործող կազմակերպություններ.....	18
1.6 Առողջապահական հաստատություններ.....	24
1.7 Աշխատանք և սոցիալական ծառայություն.....	24
1.8 Քաղաքաշինություն.....	29
1.9 Զրամատակարարում և ջրահեռացում.....	30
1.10 Էներգամատակարարում.....	33
1.11 Գազամատակարարում.....	37
1.12 Աղբահանություն, սանիտարական մաքրում.....	38
1.13 Համայնքի հողային ֆոնդ.....	38
1.14 Բնության և շրջակա բնական միջավայրի պահպանություն.....	39
1.15 Բնակարանային տնտեսություն.....	41
1.16 Տրանսպորտ, ճանապարհային տնտեսություն.....	42
1.17 Հանգստի գոտիներ, զբոսայգիներ, խաղահրապարակներ, բակային տարածքներ.....	46
1.18 Աղբյուրների ռիսկի կառավարում.....	46
1.19. Գյուղատնտեսություն.....	47
1.20 Գովազդ, առևտուր և սպասարկում.....	48
1.21 Կրթություն.....	50
1.22 Մշակույթ, երիտասարդության հետ տարվող աշխատանքներ.....	53
1.23 Ֆիզկուլտուրա և սպորտ.....	57

1.24. Համայնքում իրականացվող ծրագրեր.....	59
1.25.Սպիտակ համայնքի ուժեղ և թույլ կողմերի, հնարավորությունների և սպառնալիքների (ՈԻԹՀՍ) վերլուծություն.....	62
2.ՀԱՄԱՅՆՔԻ ՏԵՍԼԱԿԱՆԸ, ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀՆԳԱՄՅԱ ԾՐԱԳՐԻ ԳԵՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ	
2.1 Համայնքի տեսլականը	64
2.2 Համայնքի զարգացման ռազմավարությունը	64
2.3 Համայնքի զարգացման 2017-2021 թվականների գերակայությունները.....	65
3.ՀԱՄԱՅՆՔԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԻՐԱՎԻՃԱԿԻ ՎԵԼՈՒԾՈՒՄ, ԳՆԱՀԱՏՈՒՄ ԵՎ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄ, ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ՇԵՆՔԵՐԻ, ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՕՏԱՐՄԱՆ ՀՆԳԱՄՅԱ ԾՐԱԳՐԻ	
3.1 Համայնքի 2015-2016թթ. բյուջեների մուտքերի ցուցանիշները և 2017-2021թթ. բյուջեների մուտքերի կանխատեսումը.....	67
3.2 Սպիտակ համայնքի սոցիալ-տնտեսական ենթակառուցվածքների վիճակի գնահատում.....	74
3.3 Համայնքային սեփականություն համարվող անշարժ և շարժական գույքի 2017-2021թթ օտարման հնգամյա ծրագիր.....	82
4. ՀԱՄԱՅՆՔԻ ՀՆԳԱՄՅԱ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՈԼՈՐՏԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐ	
4.1 Համայնքի ոլորտային ծրագիր.....	85
4.2 Քաղաքաշինություն և ճարտարապետություն.....	92
4.3 Կրթություն, ֆիզկուլտուրա և սպորտ. մշակույթի և երիտասարդության հետ տարվող աշխատանքներ.....	115
5. ՀԱՄԱՅՆՔԻ ՀՆԳԱՄՅԱ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄՈՆԻԹՈՐԻՆԳ.....	123
ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ	
Հավելված 1.	124
Հավելված 2.	128
Հավելված 3.	130
Հավելված 4.	131
6. ԵԶՐԱՓԱԿՈՒՄ.....	134

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

ՀՀ Լոռու մարզի Սպիտակ համայնքի 2017-2021 թթ. զարգացման ծրագիրը (այսուհետ՝ ՀԶԾ) մշակելիս հաշվի է առնվել 2015 թվականի դեկտեմբերի 6-ին փոփոխված ՀՀ Սահմանադրության 181-րդ հոդվածի և 2017 թվականի հունվարի 1-ից ուժի մեջ մտած «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության նոր օրենքի պահանջները, «Համայնքների ֆինանսիստների միավորում» հասարակական կազմակերպություն փորձագետների կողմից մշակված և ՀՀ Տարածքային կառավարման և զարգացման նախարարության կողմից 2016 թվականին հավանության արժանացած՝ «Համայնքի հնգամյա զարգացման ծրագրի մշակման և կառավարման մեթոդական ցուցումները», ինչպես նաև վերընտրված համայնքի ղեկավարի նախընտրական ծրագրի դրույթները՝ նպատակ ունենալով հետևողականորեն բարեփոխումներ իրականացնելու ճանապարհով աստիճանաբար լուծել համայնքում առկա հիմնախնդիրները և բարելավել համայնքի բնակչության սոցիալ-տնտեսական պայմանները:

Ներկայացվող ՀԶԾ-ն առաջիկա հինգ տարիների համար հանդիսանալու է Սպիտակ համայնքի զարգացման հիմնական փաստաթղթերից մեկը: ՀԶԾ-ի բովանդակությունը պայմանավորված է համայնքի ռեսուրսային (մարդկային, գույքային, ֆինանսատնտեսական, տեխնիկական և այլ) հնարավորություններով, համայնքային ծրագրերի իրականացման և ծառայությունների մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների և ենթակառուցվածքների առկայությամբ: ՀԶԾ-ում հնարավորինս հաշվի են առնվել համայնքի հանրային ծառայությունների մատչելիության և հասանելիության, նոր ծառայությունների մատուցման և դրանցով պայմանավորված լրացուցիչ ծախսեր առաջանալու խնդիրները: ՀԶԾ-ն մշակելիս, որպես կողմնորոշիչ են դիտարկվել համայնքի զարգացումն ապահովելու անհրաժեշտությունը, համայնքի տարածքում տնտեսական գործունեության խրախուսման առկա հնարավորությունները, տնտեսության տարբեր ճյուղերի զարգացման (հատկապես՝ արտադրական կազմակերպությունների, փոքր և միջին բիզնեսի և այլնի) հնարավորությունները, արդյունավետ կառավարման իրականացումը: Վերհանված հիմնախնդիրների հիման վրա, ելնելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի պահանջներից, համայնքի ղեկավարը՝ համայնքապետարանի աշխատակազմի, համայնքի ղեկավարին կից խորհրդակցական մարմինների և Սպիտակ համայնքի ավագանու հետ միասին մշակել է համայնքի 2017-2021թթ. ՀԶԾ-ն:

Համայնքի 2017-2021թթ. ՀԶԾ-ում ներառված են Սպիտակ համայնքի տարածական զարգացումը սահմանող՝ քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման կամ դրանց փոփոխման (լրացման) մասին դրույթներ, շրջակա միջավայրի պահպանմանը,

համայնքում գործարար միջավայրի բարելավմանն ուղղված միջոցառումներ, աղետների ռիսկերի կառավարման և քաղաքացիական պաշտպանության հիմնական մոտեցումներ, համայնքի կոմունալ ենթակառուցվածքների զարգացմանն ուղղված միջոցառումներ: ՀՀ-ն ներառում է նաև Սպիտակ համայնքի ղեկավարի նախընտրական ծրագրի դրույթները:

Համայնքի ղեկավարին կից խորհրդակցական մարմինը, փաստաթուղթը մշակելիս, հատուկ ուշադրություն է դարձրել և ձգտել, որպեսզի այն հնարավորինս համահունչ լինի գործողության մեջ դրված ՀՀ ռազմավարական, մարզային և տարածաշրջանային զարգացման ծրագրերին՝ ակնկալելով ՀՀ պետական կառավարման մարմինների, քաղաքացիական հասարակության և մասնավոր հատվածի կազմակերպությունների հետ լիակատար փոխըմբռնում ՀՀ-ում ներկայացված խնդիրների առնչությամբ և արդյունավետ համագործակցություն դրանց լուծման գործում:

Հնգամյա զարգացման ծրագիրը կազմված է վեց բաժիններից՝

1. Համայնքի իրավիճակի գնահատում.
2. Համայնքի տեսլականը, ռազմավարությունը և համայնքի զարգացման հնգամյա ծրագրի գերակայությունները
3. Համայնքի տարածքում նախատեսվող (շարունակվող) հանրապետական և մարզային, միջհամայնքային համագործակցության և այլ ծրագրեր ու միջոցառումներ.
4. Համայնքի ֆինանսական իրավիճակի վելուծում, գնահատում և կանխատեսում, համայնքային սեփականություն համարվող շենքերի, շինությունների և հողամասերի օտարման հնգամյա ծրագիր.
5. Ոլորտային ծրագրեր.
6. Համայնքի հնգամյա զարգացման ծրագրի մոնիթորինգ:

Ծրագրի մշակմանը մասնակցել են համայնքապետարանի աշխատակազմի բոլոր ստորաբաժանումները, քննարկվել և հաշվի են առնվել հանրային լսումների արդյունքում ընդունելի համարված բոլոր առաջարկությունները:

1. ՀԱՄԱՅՆՔԻ ԻՐԱՎԻՃԱԿԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ

1.1 ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ԴԻՐՔԸ, ՊԱՏՄԱԿԱՆ ՀԱՄԱՌՈՏ ԱԿՆԱՐԿ

Սպիտակը գտնվում է Վանաձոր-Գյումրի և Վանաձոր-Երևան ավտոմոբիլային մայրուղիների խաչմերուկում, Փամբակի հովտում, Փամբակ գետի և դրա վտակ Ջրաշենի ափերին, ծովի մակերևույթից 1250մ բարձրության վրա: Հեռավորությունը մարզկենտրոնից 19 կմ է, իսկ մայրաքաղաքից՝ 97 կմ:

Քաղաքի վարչական տարածքը 6066.75 հա է:

Սպիտակի տարածքը լեռնային է. հյուսիսում ձգվում են Բազումի, իսկ հարավում՝ Փամբակի լեռնաշղթաները: Ռելիեֆն ունի էրոզիոն-դենուդացիոն կառուցվածք: Տարածքի երկրաբանական կառուցվածքը բարդ է, ձևավորված է նստվածքային հրաբխածին, ներժայթքային ապարներից՝ կրաքարեր, տուֆածին ապարներ, բազալտ ու ավազաքարեր:

Երկրաշարժաբանական առումով տարածքը համարվում է սեյսմիկ ակտիվ գոտի՝ աղետաբեր երկրաշարժի բարձր հավանականությամբ (9 և ավելի բալ):

Մայրուղիների երկարությունը 52.8 կմ է:

Սպիտակի տարածքով անցնում է Թբիլիսի-Վանաձոր-Սպիտակ-Մասիս երկաթգիծը:

Սպիտակ համայնքի տարածքը գտնվում է բարեխառն կլիմայական գոտում: Ձմեռը մեղմ է, ամառը՝ չափավոր տաք: Ամենացածր ամսեկան միջին ջերմաստիճանը հունվարին է՝ -6°C , նվազագույնը՝ -30°C , ամենատաք ամիսը հուլիսն է՝ $+18^{\circ}\text{C}$ է, առավելագույնը՝ 33°C : Միջին հաշվով 0°C -ից բարձր ջերմաստիճանով օրերի թիվը Սպիտակ քաղաքում կազմում է 270 օր: Տարեկան տեղումների միջին մակարդակը 500-550մմ է, գոլորշունակությունը՝ 900մմ: Ձնածածկույթի միջին հաստությունը 18-20 սանտիմետր է, ձնածածկույթով օրերի թիվը՝ 75-80:

Սպիտակի տարածքը եղել է հին բնակատեղի, որի պատմությունը սկսվում է դեռևս մ.թ.ա. IV-I հազարամյակներից: Սպիտակում, համանուն նախկին շրջանի Մեծ Պարնի, Ջրաշեն, Գոգարան, Արևաշող գյուղերում հայտնաբերված նեոլիթյան գործիքներն ու կենցաղային իրերը՝ քարե հատիչները, կացինները, դանակները, նետասլաքները, աղորիքները, արձանիկները և գտնված մյուս առարկաները վկայում են այդ ցեղերի հասարակական բարձր աստիճանը:

Սպիտակում՝ Սարդարի կոնդ բլուրում հայտնաբերվել են բրոնզե դարաշրջանի (ք.ա. 3-2-րդ հազարամյակում) բնորոշ առարկաներ՝ պղնձե և բրոնզե նետասլաքներ, դաշույններ, սև փայլեցրած կավախեցե ամաններ և այլ առարկաներ: Տարածքի բնակիչների կյանքը վերընթաց զարգացում է ապրել նաև ք.ա. 1-ին հազարամյակում, երբ այդ տարածքը մտել է Ուրարտու պետության կազմի մեջ (ք.ա. 7-րդ դար):

Երվանդունիների (ք.ա. 4-2-րդ դարեր) և Արտաշեսյանների (ք.ա. 2-1-ին դարեր) թագավորության ժամանակ նաև Սպիտակի այժմյան տարածքը եղել է Հայաստանի, ավելի ուշ՝ Մեծ Հայքի Գուգարք նահանգի Տաշիր գավառի կազմում: 9-րդ դարավերջին

մտել է Բագրատունյաց թագավորության, 972-1118թթ.-ը՝ Կյուրիկյան թագավորության, իսկ 12-րդ դարավերջից՝ Սելջուկյան թուրքերից ազատագրված հայկական հողերի հետ՝ Զաքարյանների իշխանապետության մեջ:

14-18-րդ դարերում Արևելյան Հայաստանի հյուսիս-արևելյան մի քանի գավառակների հետ միացվել է Ռուսաստանին, տարածքը կոչվել է Համամլուի գավառակ և մտել նախ Լոռի-Փամբակի, ապա՝ Ալեքսանդրապոլի գավառի մեջ:

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Սպիտակ քաղաքը մինչև 1949թ. կոչվել է <<Համամլու>> կամ <<Համամլի>>, որը հավանաբար առաջացել է պարսկերեն <<համամ>> (բաղնիք) բառից: Համամլուի նոր անունը՝ Սպիտակ, կապված է քաղաքի շրջակայքում եղած կրաքարի հանքերի հետ:

Համամլուի շրջանը, որպես վարչական միավոր ստեղծվել է 1937թ.-ի դեկտեմբերի 31-ին: Սպիտակը 1960թ.-ին ստացել է քաղաքի, 1971թ.-ին՝ հանրապետության ենթակայության քաղաքի կարգավիճակ:

Համամլիում դեռևս 19-րդ դարի կեսերից գործել են ծխական դպրոցներ: Նախասովետական Համամլուն, բացի մի քանի դարբնոցից, ջրաղացներից ու ձիթահանքից, արդյունաբերական ոչ մի ձեռնարկություն չուներ: Բնակիչները հիմնականում զբաղվում էին երկրագործությամբ ու անասնապահությամբ: Բնակավայրի արտադրական առաջին ձեռնարկությունը՝ պանրի գործարանը, կառուցվել է 1937թ.-ին: 1947թ. առաջին արտադրանքն է տվել շաքարի գործարանը, որն արտադրական յուրաքանչյուր սեզոնում վերամշակում էր 130 հազար տոննա շաքարի ճակնդեղ, արտադրում 14 հազար տոննա բարձրորակ շաքարավազ: Հետագայում կոմբինատի կարգավիճակ ստացած ձեռնարկության մեջ ներառված կիտրոնաթթվի արտադրամասի թանկարժեք արտադրանքն առաքվում էր ոչ միայն Խորհրդային Միության հանրապետություններ, այլև արտասահմանյան մի շարք երկրներ: Արտասահմանյան 21 երկիր (Ռումինիա, Իրաք, Վիետնամ, Մոնղոլիա, Թուրքիա, Կուբա, Մալի և այլն) և սովետմիության մի շարք խոշոր քաղաքներ էին արտահանվում <<Հայվերելակմեքենա>> միավորման մարդատար և բեռնատար վերելակներ: Այստեղ աշխատող բանվոր ծառայողների թիվը հասնում էր 700-ի: Գործում էր Հացամթերքի կոմբինատը, կարի արտադրական միավորումը, տրիկոտաժի, կոշիկի ֆաբրիկաները, ռետինատեխնիկական իրերի և հացի գործարանները: Մինչև 1988թ.-ի դեկտեմբերի 7-ի աղետալի երկրաշարժը Սպիտակը արդյունաբերական և գյուղատնտեսական զարգացած քաղաքներից էր, որտեղ գործում էր 14 արդյունաբերական ձեռնարկություն: Ուներ 7 հանրակրթական, գեղարվեստի, երաժշտական, մարզական դպրոցներ, տեխնիկում, պրոֆտեխուսումնարան, 10 մսուր-մանկապարտեզ, հիվանդանոց, զբոսայգի, մշակույթի տուն, գրադարան, կինոթատրոն, թանգարան, մարզադաշտ, կապի հանգույց, տպարան:

1988 թվականը ճակատագրական եղավ Սպիտակի կյանքում: Դեկտեմբերի 7-ին, ահեղ երկրաշարժի հետևանքով, վայրկյանների ընթացքում երբեմնի արդյունաբերական քաղաքը վերածվեց փլատակների, զոհվեց ավելի քան 4000 մարդ:

Սպիտակցին երախտագիտությամբ է հիշում բարի կամքի բոլոր երկրներին ու ժողովուրդներին, սիյուռքի մեր հայրենակիցներին, անհատ մարդկանց ու կազմակերպություններին, ովքեր իրենց անգնահատելի օգնությունն ու աջակցությունը բերեցին երկրաշարժի հետևանքների վերացման, ավերված քաղաքի վերականգնման գործին:

Բարեկամ ժողովուրդների օգնությամբ վեր հառնած Սպիտակն այսօրվա իր տեսքով, թաղամասերի անվանումներով ժողովուրդների բարեկամության իրական խորհրդանիշ է:

Չնայած նրան, որ Սպիտակում վերականգնողական մեծ աշխատանքներ են կատարվել (վերականգնվել ու գործում են բոլոր հանրակրթական, երաժշտական, գեղարվեստի և մարզական դպրոցները, բուժհաստատությունները, սպասարկման ոլորտի շատ կազմակերպություններ, վերականգնվել է բնակֆոնդի մի մասը), սակայն մինչև օրս վերացված չեն սարսափելի աղետի հետևանքները, դեռևս ամբողջովին լուծված չէ անօթևան բնակիչներին բնակարանով ապահովման խնդիրը, կան չլուծված սոցիալ-տնտեսական բազում խնդիրներ՝ փողոցների բարեկարգում և լուսավորություն, ոռոգման, խմելու ջրի ջրագծերի, կոյուղագծերի կառուցում և վերանորոգում: Սպիտակում խիստ կարևորվում է աշխատատեղերի ստեղծման խնդիրը:

1.2 ՊԱՏՄԱԿԱՆ ԵՎ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԱՐԺԵՔՆԵՐ

Համայնքում գտնվում են 32 պատմաճարտարապետական և հնագիտական հուշարձաններ, որոնցից 19-ը ընդգրկված են ՀՀ մշակույթի նախարարության պատմամշակութային հուշարձանների պահպանության ցանկում, 4-ը քարտեզագրված են, իսկ 13 հուշարձաններ, որոնք կառուցվել են 1990-2016 թվականներին, ընդգրկված չեն ՀՀ մշակույթի նախարարության պատմամշակութային հուշարձանների պահպանության ցանկում:

Աղյուսակ 1.2.1 Սպիտակ համայնքի պատմության և մշակույթի հուշարձանների պեղական ցուցակ.

Հուշի N-ը	Հուշարձանի ենթահամարը			Հուշարձանը, Հուշարձանախումբը	Ժամանակը	Տեղը բնակավայրի նկատմամբ	Նշանակ. հանրապ. տեղակ.	Ծանոթագրութ.	Սեփ-ը
1	2	3	4	5	6	7	8	9	10
1.				Բնակատեղի	Ք.ա. 2 հազ.	քաղաքի հս-աե մասում, Փամբակ գետի ձախ ափին,	<		ՊՍ

						ալրադաց կոմբինատի դիմաց			
	1.2			Դամբարանադաշտ	Ք.ա. 2 հազ.	կոմբինատի տարածքում և շրջակայքում	<	Դեպի Երևան տանող ավտոճան-ի աջ մասում	ՊՍ
2.				Բնակատեղի «Սարդարի բլուր» («Սարդարի կոնդ»)	Ք.ա. 3-1 հազ.	քաղաքի ամ մասում	<	քարտեզագրված	
3.				Գերեզմանոց	19-20-րդ դդ.	Շահումյան փող.	S	քարտեզագրված	
4.				Գերեզմանոց	19-20-րդ դդ.	N 1 դպրոցի մոտ	S	քարտեզագրված	
	4.1			Տապանաքար	1841 թ.		S		
5.				Գյուղատեղի «Բակեր»	Ք.ա. 4-3 հազ., 15-16-րդ դդ.	քաղաքի հվ մասում	<	«Գյուղներ» կոչվող վայրում	ՊՍ
	5.1			Գերեզմանոց	15-16-րդ դդ.		S		ՊՍ
6.				Դամբանաբլուր	Ք.ա. 3 հազ. 2 կես	Սպիտակ-Վանաձոր ճանապարհի ձախ եզրին	<		ՊՍ
7.				Եկեղեցի	2001 թ.	քաղաքի մեջ	<		
8.				Կամուրջ	19-րդ դ./1935թ./	քաղաքի մեջ, ավտոկայանից ոչ հեռու	S	միաթռիչք քարտեզագրված	
9.				Հուշարձան՝ Երկրորդ աշխարհամարտում զոհվածներին	1968 թ.	քաղաքային զբոսայգում	S	ճարտ. Գ. Գյուլխասյան	ՊՍ
10.				Հուշարձան ԱԼ. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ	1966 թ.	N 1 դպրոցի բակում	S		ՊՍ
11.				Հուշարձան Դ. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆԻ	1965 թ.	N 2 դպրոցի բակում	<		ՊՍ
Սպիտակի նորահայտները									
	7.1			Խաչքար	միջնադար	ազուցված է եկեղեցու ամ.պատին			
	7.2			Հուշակոթող 1915թ. մեծ եղեռնի նահատակների և Արցախյան պատերազմում զոհված ազատամարտիկների	2008թ.	Եկեղեցու բակում արծիվ			
12.				Հուշարձան Ֆրիտյոֆ Նանսենի	1989թ.	Քաղաքի Նորվեգական թաղամասում	<		

13.				Հուշարձան Նիկոլայ Ռիժկովի	1998թ.	Քաղաքի մեջ Շահումյան փող.	Ստ.	S		
14.				Հուշարձան 1988թ.երկրաշարժի զոհերի հիշատակին	1991թ.	Քաղաքի մեջ Շահումյան փող.	Ստ.	S		
15.				Հուշարժան երկրորդ աշխարհամարտում զոհվածներին<<Վերածնունդ>>	1985թ.	Քաղաքի ամ մասում,գերեզմանների մոտ, բարձրադիր բլրի վրա			Ճարտ.Ա.Հայդեյան	

Աղյուսակ 1.2.2 Պատմամշակութային հուշարձանների պահպանության ցանկում չընդգրկված հուշարձաններ.

Հուշ-ի N-ը	Հուշարձանը,Հուշարձանախումբը	Ժամանակը	Տեղը բնակավայրի նկատմամբ	Ծանոթագրություն
1	2	3	4	5
1.	Հուշարձաններ 2 հատ	1990թ.	Թիվ 8 միջնակարգ դպրոցի տարածքում	<<Հայկուրորտստորյ>> կազմակերպության կողմից
2.	Անանիա Շիրակացու հուշարձան	1990թ.	Թիվ 8 միջնակարգ դպրոցի տարածքում	
3.	Ս.Ավետիսյանի կիսանդրին		Քաղաք.հրապարակ	
4.	Խաչքար 1988թ.երկրաշարժից զոհված 3-րդ դպրոցի աշակ.և ուսուց. հիշատակին	2008թ.	Ավագ դպրոցի տարածք	Համայնքի բնակիչ Կարեն Մխիթարյանի կողմից
5.	Սպիտակի վերածնունդը խորհրդանշող հուշարձան	2004թ.	Եկեղեցու տարածքում	<<Բերգամո-Սպիտակ>> զորակցական միության կողմից
6.	Ն.Աճեմյանի կիսանդրին	2009թ.	Քաղաք.հրապարակի արև. մասում	
7.	Երկրաշարժի զոհերի հիշատակին նվիրված հուշարձան	2011թ.	Քաղաքի մեջ, Ստ. Շահումյան փող.	<<Երուսաղեմի բժշկական Սուրբ Ղազարի Օրդենը Հայաստանում>>բարեգ. հիմնադրամ
8.	1988թ.երկրաշարժի հետևանքների վերացման աշխատ. մասնակցած խորհրդային զինվորներին նվիրված հուշարձան	2015թ.	Քաղաքի արևմ. մասում գտնվող բլուր	<<Սպիտակի հուշարձան>> ՀԿ-ի ղեկավար Նորայր Մուրադյանի նախաձեռնությամբ

9.	Ճապոնիայում 2011թ.ցունամիի զոհերի հիշատակի հուշաքար	2016թ.	Քաղաքի մեջ, Ստ. Շահումյան փող.	
10.	2016թ. ապրիլյան քառօրյա պատերազմի զոհերի հիշատակի խաչքար	2016թ.	Քաղաքի մեջ, Ստ. Շահումյան փող	
11.	Եվրոպոլիսի խորհրդանիշ		Քաղաքի մեջ, Ստ. Շահումյան փող	
12.	Խաչքար		Եկեղեցու հարավ. մասում	

Հիմնախնդիրներ, նախատեսվող ծրագրային միջոցառումներ

- Համայնքի կենտրոնը Պանրագործներ թաղամասին կապող հուշարձան-կամուրջը տուժել է 1988թ. ավերիչ երկրաշարժից:
- Հուշարձանի վերանորոգման աշխատանքների կազմակերպում:
- Սպիտակ համայնքի պատմությանը, մշակութային և սոցիալ-տնտեսական զարգացմանը վերաբերող տպագիր տեղեկատվական նյութի հրապարակում:

1.3 ԺՈՂՈՎՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԿԱԶՄ

Սպիտակ համայնքի մշտական բնակչության թվաքանակը ՀՀ Ոստիկանության ԱՎՎ Սպիտակի անձնագրային բաժնի կողմից տրված տվյալներով 2017 թվականի հունվարի 1-ի դրությամբ կազմել է 17217 մարդ, որից տղամարդիկ կազմում են բնակչության 48.2%-ը, իսկ կանայք՝ 51.8%: Բնակչության սոցիալական կազմը հետևյալն է՝

Հ/Հ	Ցուցանիշների անվանումը	Չափի մ.	Քանակը
1	Բնակչության թիվը այդ թվում՝	մարդ	17217
1,1	կանայք	մարդ	8915
1,2	տղամարդիկ	մարդ	8302
2	Փաստացի բնակչության թիվը	մարդ	11321
3	թոշակառուներ այդ թվում՝	մարդ	2978
3.1	- տարիքային	մարդ	1213

3.2	- հաշմանդամներ այդ թվում	մարդ	1765
3.3	Հաշմանդամ երեխաներ	մարդ	84
3.3	-միակողմանի ծնողազուրկ երեխաներ	մարդ	72
3.4	- երկկողմանի ծնողազուրկ երեխաներ	մարդ	3
4	Փախստականներ	ընտանիք	-
5	Առկա տնային տնտեսությունների թիվը	ընտանիք	4244
6	Ընտանեկան նպաստների պետական համակարգում գրանցված ընտանիքների թիվը, այդ թվում՝	ընտանիք	2258
6.1	նպաստառուների թիվը	ընտանիք	1896
7	Հայրենական մեծ պատերազմի մասնակիցներ	մարդ	3
8	Զոհված ազատամարտիկների ընտանիքներ	ընտանիք	4
9	Արցախյան պատերազմի մասնակիցներ	մարդ	37
10	Աշխատունակներ	մարդ	9799
11	Զբաղվածներ	մարդ	2539
12	Աշխատանք փնտրողներ	մարդ	1422
13	Գործազուրկներ Այդ թվում	մարդ	859
13.1	Տարրական կրթությամբ	մարդ	75
13.2	Միջնակարգ կրթությամբ	մարդ	480
13.3	Միջն. Մասնագիտ. կրթությամբ	մարդ	206
13.4	Բարձրագույն կրթությամբ	մարդ	98
14	Հայրենական մեծ և արցախյան պատերազմներում զոհվածների ընտանիքների թիվը		347
15	Բնակարանի կարիքավոր ընտանիքների թիվը	ընտանիք	800
16	Անօթևան ընտանիքներ	ընտանիք	-
17	Բնակարանային պայմանների բարելավման կարիք ունեցող ընտանիքների թիվը		464

Հ/Հ	Բնակչության տարիքային կազմը	Ընդամենը
-----	-----------------------------	----------

1	0-6 տարեկան	1794
2	7-17 տարեկան	2983
3	18-62 տարեկան	9776
4	63 և ավելի բարձր	2664
5	Ընդհանուր բնակչությունը	17217

Հ/հ	Բնութագրիչներ	01.01.2014թ. դրությամբ	01.01.2015թ. դրությամբ	01.01.2016թ. դրությամբ	01.01.2017թ. դրությամբ
1	Բնակչությունը	16458	16634	17064	17217
2	Ծնվածներ	171	226	199	160
3	Մահացածներ	109	100	108	124
4	Ամուսնություններ	48	48	36	34
5	Ամուսնալուծություններ	43	46	33	64

Աղբյուրը՝ Սպիտակի անձնագրային և ՔԿԱԳ Սպիտակի տարածքային բաժին

1.4 ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐ **Համայնքի կառավարում**

Տեղական ինքնակառավարման մարմիններն են՝

1. Համայնքի ավագանին՝ բաղկացած 15 անդամից, (ընտրված 2016 թվականին հոկտեմբերի 2-ին) լիազորությունների սկիզբը 2016թ. նոյեմբերի 21-ից:

2. Համայնքի ղեկավարը (ընտրված 2016թվականի 17 ապրիլին), լիազորությունների սկիզբը 2016թ հունիսի 6-ից:


Համայնքի ղեկավարն իր լիազորություններն իրականացնում է համայնքապետարանի աշխատակազմի և լրացնել միջոցով:

Համայնքապետարանի աշխատակազմի հաստիքների թիվը 50 է, որից քաղաքական պաշտոն-1, հայեցողական պաշտոն գրադեցնողներ- 5, համայնքային ծառայողներ-35՝ սպասարկող անձնակազմ 9-ը:

Համայնքապետարանի աշխատակազմը բաղկացած է 5 կառուցվածքային և 1 առանձնացված ստորաբաժանումներից:

Համայնքապետարանի աշխատակազմի կառուցվածքը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ



Սպիտակի համայնքապետարանի աշխատակազմ

Կառուցվածքային ստորաբաժանումներ

1. Ֆինանսական և եկամուտների հավաքագրման բաժին
2. Քաղաքաշինության, հողօգտագործման, կոմունալ սպասարկման և տրանսպորտի բաժին
3. Սոցիալական, մշակույթի, երիտասարդության, սպորտի և լրատվության բաժին
4. Քարտուղարության բաժին
5. Ներքին աուդիտի բաժին

Առանձնացված ստորաբաժանում

1. Քաղաքացիական կացության ակտերի գրանցման Սպիտակի տարածքային բաժին:
ՔԿԱԳ-ի բաժինն աշխատում է նորացված էլեկտրոնային ծրագրով, որը համակցված է անձնագրային ծառայությունների, «Նորք» ծառայության և էլ-նոտար ծառայությունների հետ: ՔԿԱԳ-ի բաժինը սպասարկում է տարածաշրջանի 20 համայնքների բնակիչներին: Տարածքային բաժինը իրականացնում է գրանցումները Հայաստանի Հանրապետության ՔԿԱԳ օրենքի սահմաններում: Կատարում է քաղաքացիների ծննդյան, մահվան, ամուսնության, ամուսնալուծության, որդեգրման, հայրության ճանաչման ակտերի գրանցումներ, ինչպես նաև ուղղման, փոփոխման, ծննդյան ակտերի վերականգնման գործընթացներ: Իրականացնում է ՔԿԱԳ արխիվային գործվարումը:

Համայնքի ենթակայության ոչ առևտրային կազմակերպությունների անվանումները և հաստիքային միավորների և աշխատակիցների թվաքանակը

- <<Սպիտակի թիվ 1 ՆՈՒՀ>> ՀՈԱԿ -9,74 հաստիքային միավոր- 11 աշխատակից,
- <<Սպիտակի թիվ 2 ՆՈՒՀ>> ՀՈԱԿ -29,72 հաստիքային միավոր- 30 աշխատակից,
- <<Սպիտակի երաժշտական դպրոց կրթադաստիարակչական ուսումնական հաստատություն>> ՀՈԱԿ – 27,58 հաստիքային միավոր- 25 աշխատակից,
- <<Սպիտակի գեղարվեստի դպրոց կրթադաստիարակչական ուսումնական հաստատություն >> ՀՈԱԿ – 9,49 հաստիքային միավոր- 10 աշխատակից,
- <<Սպիտակի քաղաքային գրադարան>> ՀՈԱԿ- 14,5 հաստիքային միավոր- 15 աշխատակից,
- <<Սպիտակի մշակույթի տուն>> ՀՈԱԿ -11,5 հաստիքային միավոր- 12 աշխատակից,
- <<Սպիտակի թիվ 1 մանկապատանեկան մարզադպրոց>> ՀՈԱԿ – 17,5 հաստիքային միավոր- 16 աշխատակից,
- <<Սպիտակի ԲՍԳ>> ՀՈԱԿ – 16 հաստիքային միավոր- 16 աշխատակից:

Բնակչության մասնակցությունը տեղական ինքնակառավարմանը

ՏԻՄ-երի գործունեությունը դարձել է համեմատաբար ավելի թափանցիկ և հրապարակային, որն զգալիորեն նպաստում է համայնքի բնակչության իրազեկվածությանը ՏԻՄ-երի ընդունած որոշումներին և կատարած աշխատանքներին: Սակայն համայնքի բնակիչները դեռևս բավականին ակտիվություն չեն ցուցաբերում ՏԻՄ-երի կողմից կազմակերպված հանրային հանդիպումներին ու միջոցառումներին մասնակցելու ուղղությամբ: Հանրային լսումներին նրանց մասնակցությունն ապահովվում է հրավերների միջոցով:

Սպիտակ համայնքը մասնակցում է <<Հանրային Մասնակցություն Տեղական ինքնակառավարմանը>> (ՀԱՄԱՏԵՂ) ծրագրին, որի շրջանակներում 2016թ. <<Համայնքների ֆինանսիստների միավորում>> ՀԿ առաջնորդությամբ, համայնքներում տեղական ինքնակառավարմանը բնակիչների մասնակցության բնագավառում ուսուցման սեմինարների միջոցով իրականացվել է համայնքապետարանի աշխատակազմի և ենթակա կազմակերպությունների մասնագետների, բնակչության ակտիվ խավերի վերապատրաստում:

<<Աջակցություն Հայաստանում տեղական ժողովրդավարության ամրապնդման>> ծրագրի շրջանակներում Եվրոպայի խորհրդի աջակցությամբ տրամադրված սարքավորումների միջոցով 2016թ. հոկտեմբերից ավագանու նիստերը հեռարձակվում են ինտերնետային կայքի միջոցով, որը նպաստում է ՏԻՄ-երի գործունեության նկատմամբ բնակչության իրազեկվածության բարձրացմանը, վստահության ամրապնդմանը:

Համայնքի ավագանու կողմից ընդունվել են տեղական ինքնակառավարմանը բնակիչների մասնակցության, համայնքի ղեկավարին կից խորհրդակցական մարմինների ձևավորման և գործունեության, համայնքում հանրային բաց լսումների և (կամ) քննարկումների կազմակերպման և անցկացման կարգերը, որոնք հնարավորինս կնպաստեն բնակիչների ավելի ակտիվ մասնակցությանը տեղական ինքնակառավարմանը:

Հիմնախնդիրներ, նախադեսվող ծրագրային միջոցառումներ

- Համայնքային կառավարման տեղեկատվական համակարգի զարգացման միջոցով բարձրացնել ծառայությունների որակը, համայնքի բյուջեի և սեփականության առավել արդյունավետ կառավարումը, քաղաքացիների կողմից ՏԻՄ մարմինների գործունեության վերահսկողությունը:
- Կայքի կատարելագործման ուղղությամբ համատեղ աշխատանքներ տանել «Տեղեկատվական համակարգերի զարգացման և վերապատրաստման կենտրոն» ՀԿ-ի հետ, հարկերի և վարձավճարների գանձման աշխատանքների արդյունավետության բարձրացման նպատակով հնարավորություն ստեղծել բոլոր հարկատուների, վարձավճարներ վճարողների համար առցանց ծանոթանալու իրենց պարտավորություններին:

- Ամրապնդել սերտ համագործակցությունը պետական և տարածքային կառավարման, գործադիր մարմինների տարածքային ծառայությունների, զանգվածային լրատվական միջոցների հետ:
- Պահպանել քաղաքացիների և իրավաբանական անձանց՝ օրենքով սահմանված իրավունքները վարչական մարմնի հետ իրավահարաբերություններում:
- Վարչարարությունն իրականացնել օրենքով ամրագրված վարչարարության սկզբունքներին համահունչ, սահմանված կարգով և ժամկետներում՝ ընդունելով իրավաչափ վարչական ակտեր:
- Համայնքային կառավարման տեղեկատվական համակարգի զարգացման միջոցով բարձրացնել ծառայությունների որակը, համայնքի բյուջեի և սեփականության առավել արդյունավետ կառավարումը, քաղաքացիների կողմից ՏԻՄ մարմինների գործունեության վերահսկողությունը:
- Կատարելագործել համայնքի պաշտոնական կայքը, լայն հասարակությանն իրազեկել համայնքում կատարված աշխատանքների մասին:
- Ամրապնդել սերտ համագործակցությունը պետական և տարածքային կառավարման, գործադիր մարմնի տարածքային ծառայությունների, զանգվածային լրատվական միջոցների հետ:
- ՔԿԱԳ համագործակցություն ԴԱՀԿ ծառայությունների հետ աշխատանքների և սպասարկման ոլորտի բարելավման նկատառումներով:
- ՔԿԱԳ արխիվների պահպանման համար շենքային պայմանների ստեղծում:
- Վերոհիշյալ խնդիրների լուծումը հնարավորություն կտա բարձրացնել համայնքապետարանի գործունեության հրապարակայնությունն ու թափանցիկությունը, համայնքի բնակիչներին՝ առավել ակտիվորեն մասնակցել համայնքի կառավարմանը:

1.5 ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԳՈՐԾՈՂ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հ/հ	Արտադրական ձեռնարկության անվանումը	Հասցեն	Գործունեության բնագավառը	Ձեռնարկության/ կազմակերպության առկա իրավիճակը գործում է/ չի գործում
1.	«Մ. Լամբարյան» ՍՊԸ	Ս.Ավետիսյան 274	քաղաքացիական շինարարություն	գործում
2.	«ՕՍՏ- շին» ՍՊԸ	Թորոսյան 8	քաղաքացիական շինարարություն	գործում է
3.	«Մ. Սիսակյան» ՍՊԸ	Շիրակի խճ. 36	քաղաքացիական շինարարություն	գործում է
4.	«Սպիտակ-2» ԲԲԸ	գ. Քարածոր	քաղաքացիական շինարարություն	գործում է
5.	«ՍԱՀԱԿՅԱՆ ՇԻՆ» ՍՊԸ	Ս.Ավետիսյան 43	քաղաքացիական շինարարություն, ճանապարհաշինություն, էլեկտրահաղորդման և հեռահաղորդակցական համակարգերի շինարարություն	գործում է
6.	«Սպիտակի թոշնաբուժական ֆաբրիկա» ՍՊԸ	Շիրակի խճ. 144	ընտանի թոշունների բուժում, հավի մսամթերքի արտադրություն	գործում է
7.	«Սպիտակի թոշնաբուժական կոմբինատ» ՍՊԸ	Այգեստան 47/5	կերերի արտադրություն	գործում է
8.	«ԱՐԹՎԱՐԴ» ՍՊԸ	Ալ.Մանուկյան 5բ.	Հանրային սննդի օբյեկտ	գործում է
9.	«Մոնոլիտ Սպիտակ» ՍՊԸ	Գյումրիի խճ. 36	բետոնե հավաքովի շինարարական կոնստրուկցիաների արտադրություն	գործում է
10.	«Սպիտակ» նոտարական տարածք	Ս. Ավետիսյան 17բ/1	նոտարական ծառայություն	գործում է
11.	ՀՀ ԿԱԱԳԿ ՊԿ աշխատակազմի «Սպիտակ» սպասարկման	Շահումյան փ. 7 շենք	պետական կառավարչական հիմնարկ	գործում է

	գրասենյակ			
12.	ՀՀ իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալության Սպիտակի սպասարկման գրասենյակ	Շահումյան փ. 7 շենք	պետական կառավարչական հիմնարկ	գործում է
13.	Զբաղվածության պետական գործակալության Սպիտակի ՋՏԿ	Շահումյան փ. 7 շենք	սոցիոլոգիայի բնագավառում գործունեություն	գործում է
14.	«ԼՈՌՈՒ ԳԱՄԿ» ՓԲԸ	Շահումյան փ. 7 շենք	խառը գյուղատնտեսություն	գործում է
15.	ՀՀ ԱՎԾ ԼՈՌՈՒ ՄԳ Սպիտակի տարածքային բաժին	Շահումյան փ. 7 շենք	վիճակագրության բնագավառում գործունեություն	գործում է
16.	Հայաստանի ազգային արխիվի Սպիտակի տարածքային ներկայացուցչություն	Շահումյան փ. 7 շենք	արխիվային գործ	գործում է
17.	ՀՀ Լոռու մարզի ընդհանուր իրավասության դատարան	Ալ. Մանուկյան 2-րդ նրբ.10	արդարադատություն	գործում է
18.	ՀՀ ոստիկանության Լոռու մարզային վարչության Սպիտակի բաժին	Ալ. Մանուկյան 1-Ա	իրավապահ գործունեություն	գործում է

19.	Սոցիալական ապահովության պետական ծառայության Սպիտակի տարածքային բաժին	Խնկոյան փ. 30 շենք	պարտադիր սոցիալական ապահովագրություն	գործում է
20.	Լոռու մարզպետարանի Սպիտակի սոցիալական ծառայությունների տարածքային գործակալություն	Խնկոյան 46	սոցիալական ծառայությունների իրականացում	գործում է
21.	«Հայփոստ» ՓԲԸ «Հայփոստ Հյուսիս» մ/ճ	Ս. Ավետիսյան 7	Փոստային ծառայություններ, դրամավարկային այլ միջնորդություն	գործում է
22.	«Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ	ք. Երևան, Թբիլիսյան խճուղի 43	գազամատակարարման համակարգի միջոցով բաշխվող գազի վաճառք	գործում է
23.	ՀԷՑ ՓԲԸ Դեբեդ մ/ճ	Գյումրու խճ. 31	էլեկտրաէներգիայի վաճառք	գործում է
24.	«Վեոլե ջուր» կազմակերպություն	Երևան, Աբովյան 66-Ա	ջրամատակարարում և ջրի հեռացում	գործում է
25.	«ԱԿԲԱ -ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈՒԼ ԲԱՆԿ» ՓԲԸ «Սպիտակ» մ/ճ	Ս. Ավետիսյան 3	բանկային գործունեություն	գործում է
26.	«Հայէկոնոմբանկ» ԲԲԸ «Սպիտակ» մ/ճ	Շահումյան 5	բանկային գործունեություն	գործում է

27.	«ՎՏԲ-Հայաստան բանկ» ՓԲԸ «Սպիտակ» մ/ճ	Քաղաքային հրապարակ	բանկային գործունեություն	գործում է
28.	«ԱՐԴՇԻՆԲԱՆԿ» ՓԲԸ «Սպիտակ» մ/ճ	Ս. Ավետիսյան փ. 6 շենք	բանկային գործունեություն	գործում է
29.	«ԱՐԱՐԱՏԲԱՆԿ» ԲԲԸ «Սպիտակ» մ/ճ	Թորոսյան 13	բանկային գործունեություն	գործում է
30.	«ՖԻՆԲԱ» ՓԲԸ	Ս. Ավետիսյան փ. 2 շենք	ունիվերսալ վարկային կազմակերպություն	գործում է
31.	«Սև կակաչ» ԱԿ	Ալ. Մանուկյան 5	մանրածախ առևտուր	գործում է
32.	«Աննա և Կարեն» ՍՊԸ	Երևանյան խճուղի 117	գազամատակարարման համակարգի միջոցով բաշխվող գազի վաճառք	գործում է
33.	«ԴիլԿար Ֆարմ» ՍՊԸ	Ալ. Մանուկյան 19	դեղերի մանրածախ առևտուր	գործում է
34.	«Լիլիթ-95» ՍՊԸ	Քըրք-Քրքորյան	քաղաքային և մերձքաղաքային մարդատար տրանսպորտի գործունեություն	գործում է
35.	«ՌՈՂԻ ԳՐՈՒՊ» ՍՊԸ	Բաղրամյան 14	քաղաքային և մերձքաղաքային մարդատար տրանսպորտի գործունեություն	գործում է
36.	«Օֆմա» ՍՊԸ	Ալ. Մանուկյան 5/2	ապահովագրություն, գյուղատնտեսություն	գործում է
37.	«Ագրոհոլդինգ Արմենիա» ՍՊԸ	Պանրագործ- ների թաղ.	կաթնատու խոշոր եղջերավոր անասունների բուծում, գյուղատնտեսություն	գործում է

38.	«Բիդլայֆ»	Երևանյան խճ.54	Զերմոցային տնտեսություն	գործում է
39.	«Արմենիա Տելեֆոն Կոմպանի» ՓԲԸ	Շահումյան փող. 5 շենք	հեռախոսակապի և HI-line ծառայություններ	գործում է
40.	«ՅՈՒՔՈՄ» հեղահաղորդակցական նրնկերություն	Ս. Ավետիսյան փող. 1 շենք	հեռահաղորդակցության ծառայություններ	գործում է
41.	«Ղ-Տելեկոմ» ՓԲԸ	Ս. Ավետիսյան փող. 1 շենք	հեռահաղորդակցության ծառայություններ	գործում է
42.	«Ճանապարհ» ՓԲԸ	Տեր-Սիմոնյան 3	ճանապարհների և ավտոմայրուղիների շինարարություն	գործում է
43.	«Մ. Սիսակյան» ՍՊԸ	Շիրակի խճուղի 36	քաղաքացիական շինարարության այլ կառույցների շինարարություն	գործում է
44.	«Արտյոմ և Մաթևոս» ՍՊԸ	Լենինականի խճուղի 1	բենզինի և դիզելային վառելիքի մանրածախ առևտուր	գործում է
45.	«Սպիտակի հացամթերքների կոմբինատ» ԲԲԸ	Վանաձորի խճուղի 6	արտադրական (ալրաղաց)	գործում է
46.	ԿԷՎԱ ա/կ	Ալեք Մանուկյան 9	այլ մանրածախ առևտուր ոչ մասնագիտացված խանութներում	գործում է
47.	«Անտվերպեն» ՍՊԸ	Ավետիսյան 1 նրբ. 58	մաքրող միջոցների մեծածախ առևտուր	գործում է
48.	«Բույլ» ՍՊԸ	Շիրակի խճուղի	գազամատակարարման համակարգի միջոցով բաշխվող գազի վաճառք	գործում է
49.	«Արվետ» ՍՊԸ	Երևանյան խճուղի	գազամատակարարման համակարգի միջոցով բաշխվող գազի վաճառք	գործում է
50.	«Գործարար» ՍՊԸ	Երևանյան խճուղի	այլ մանրածախ առևտուր ոչ մասնագիտացված խանութներում	գործում է

51.	«Դենիսմենդե Վենները Սպիտակում» ԲՀ	Իտալական թաղամաս	բարեգործական հիմնադրամ	գործում է
52.	«Թեոդոսիա» ՍՊԸ	Թորոսյան 9	հասարակական սննդի կազմակերպում	գործում է
53.	«Սլավ Ֆուդ» ՓԲԸ	Ալեք Մանուկյան 7	առևտրական, արտադրական	գործում է
54.	«Միսիոներների բարեգործական կազմակերպության Հ. մ/ճ»	Իտալական թաղամաս	սոցիալական սպասարկում կաջության ապահովմամբ – կրթամշակութային	գործում է
55.	«Սպիտակի Կասկադ» ՍՊԸ	Ս. Ավետիսյան հրապարակ 6	մետաղե դռների և լուսամուտների արտադրություն	գործում է
56.	«Մարտին Մ» ՍՊԸ/ԲԿՏ	Ս. Ավետիսյան 324	կոմունալ սպասարկում, այլ ծառայությունների մատուցում	գործում է
57.	«Վանուի» ԲԲԸ	Երևանյան խճուղի 49	հագուստի արտադրություն	գործում է
58.	«Արմեն Գասպարյան և Ռուզաննա» ՍՊԸ	Սայաթ-Նովա 6	մանրածախ առևտուր	գործում է

1.6 ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Համայնքում գործում է <<Սպիտակի բժշկական կենտրոն>> ՓԲԸ, որը համայնքի բնակչության առողջապահական սպասարկումը իրականացնում է երկու մասնաշենքերում, /հիվանդանոցային և պոլիկլինիկական/ արհեստավարժ բուժական անձնակազմի օգնությամբ: /բժիշկներ՝ 47 և 100 միջին բուժանձնակազմ/: Մասնաշենքերը գտնվում են լավ վիճակում /հնարավորության դեպքում կարելի է կատարել պոլիկլինիկական մասնաշենքի առաստաղի մասնակի վերանորոգում/, ջեռուցվում են: Հիվանդանոցն ունի սոմատիկ, վիրաբուժական, մանկաբարձա- գինեկոլոգիական, ինֆեկցիոն բաժանմունքներ, դիագնոստիկ ախտորոշիչ բաժին, շտապ բուժօգնության ենթակայան: 2016թ. հունիսից ԲԿ-ում գործում է նաև ժամանակակից ակնաբանական կենտրոնը:

Համայնքում գործում են 11 դեղատներ: Բժշկական ծառայություն են մատուցվում նաև <<Ռեցեպտոր>> առողջապահական կենտրոնի /2 բժիշկ, 2 բուժքույր, 1 բժշկի օգնական: <<Հույս Հայաստան հիմնադրամ>>-ի բժշկական բարեգործական կենտրոնի /4 բժիշկ, 3 բուժքույր, 2 օժանդակ աշխատակից/ կողմից: Համայնքապետարանի և <<Խնամք>> ՀԿ-ի համագործակցությամբ Իտալական թաղամասում կառուցվել, գույքով համալրվել է և 2016թ ապրիլից գործում է խնամքի կենտրոնը՝ հոգեկան խնդիրներ ունեցող մարդկանց համար, որտեղ աշխատում է 12 մարդ:

1.7 ԱՇԽԱՏԱՆՔ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

Համայնքում կա 9799 աշխատունակ մարդ, որոնցից մշտական աշխատանքով զբաղված են միայն 2539-ը, 859 անձ որպես գործազուրկ գրանցված են Սպիտակի զբաղվածության տարածքային կենտրոնում:

Համայնքի 4244 ընտանիքներից 2258-ը հաշվառված են ընտանեկան նպաստի պետական համակարգում, որոնցից սոցիալապես անապահովության նպաստառու է գնահատվել 1896 ընտանիք: Համայնքում բնակվում է 1765 հաշմանդամ, միակողմանի ծնողազուրկ՝ 72 երեխա, երկկողմանի ծնողազուրկ՝ 3 երեխա:

Համայնքում պետական և համայնքային սոցիալական ծրագրերի իրականացումը միտված է համայնքի կյանքի դժվարին իրավիճակներում հայտնված անձանց սոցիալական պաշտպանությանը, սոցիալական ռիսկերի աստիճանական կրճատմանը: Համայնքում սոցիալապես խոցելի ընտանիքներն իրենց բազմաբնույթ սոցիալ-առողջապահական խնդիրներով բազմաթիվ են: Պետական պատվերի շրջանակներում համայնքի բնակիչներին շոշափելի սոցիալական ծառայություններ մատուցվում են հիմնականում Սպիտակի ՍԾՏԳ-ի կողմից: Կշարունակվի Սպիտակի համայնքապետարանի և սոցիալ բարեգործական հասարակական կազմակերպությունների հետ համագործակցությունը, որոնց արդյունքում նախատեսվում է կյանքի դժվարին

իրավիճակներում հայտնված սոցիալապես անապահով, բազմանդամ, բազմազավակ ընտանիքներին, կերակրող կորցրած, միայնակ մոր կարգավիճակ, հաշմանդամության խումբ ունեցող անձանց սննդի (1800 ընտանիք), 1500 դպրոցահասակ երեխաներին՝ հագուստի, կոշիկների, գրենական պիտույքների, 815 միայնակ ծերերին՝ ձմեռային տաք կոշիկների, հագուստի, անկողնային պարագաների, 10 հիվանդներին՝ դեղորայքի տրամադրման աջակցությունը:

Շահագործված մշակութային (թանգարաններ, գրադարաններ), և մարզական նշանակություն ունեցող (մարզադպրոցներ, մարզադահլիճներ) շենքերն ու շինությունները հարմարեցված են հաշմանդամություն ունեցող անձանց համար: Հաշմանդամություն ունեցող անձինք մասնակցություն ունեն մշակութային, մարզական-մասսայական ծրագրերին:

Համայնքապետարանի կողմից յուրաքանչյուր տարի 2մլն 850 հազար դրամ է կներդրվի <<Առաքելություն Հայաստան>> բարեգործական հասարակական կազմակերպության հետ համատեղ իրականացվող Սպիտակ համայնքի սոցիալապես անապահով տարեցների, հաշմանդամների և այլ անապահով խավերի (110 շահառու) առաջնային սոցիալական խնդիրների լուծմանն ուղղված ծրագրին (սնունդ, բուժօգնություն, իրավական և այլ խորհրդատվություններ):

Աշխատանքներ կտարվեն <<Բիոլաֆ>> ՍՊԸ-ի օրինակով համայնքում սոցիալական ձեռնարկություններ հիմնելու ուղղությամբ՝ հաշմանդամների համար աշխատատեղեր ստեղծելու նպատակով:

Հիմնախնդիրներ, նախատեսվող ծրագրային միջոցառումներ

- Ինտեգրված սոցիալական ծառայությունների համակարգի ներդրում:
- Հաշմանդամություն ունեցող անձանց համար մատչելի միջավայրի ձևավորում և նրանց հասարակությանն աստիճանական ինտեգրում, մանկուց հաշմանդամ երեխաների ներառական կրթության ապահովում:
- Մանկապարտեզներում ներառական կրթության ներդրում:
- Տարեցների, հաշմանդամություն ունեցող անձանց համար սոցիալ-վերականգնողական կենտրոնի աշխատանքի շարունակականության ապահովում:
- Առանց ծնողական խնամքի մնացած երեխաների հիմնախնդիրների կարգավորում:
- Բազմազավակ ընտանիքների բնակարանային և սոցիալ-կենցաղային պայմանների բարելավում:
- Աղքատության հաղթահարում, գործազրկության մեղմացում աշխատատեղերի ստեղծման միջոցով:

Համայնքում սոցիալական պաշտպանության համակարգը ներառում է.

Պետական սոցիալական օժանդակության ծրագրեր՝

- Սոցիալապես տարբեր աստիճանի խոցելիություն ունեցող, կյանքի դժվարին իրավիճակներում հայտնված անձանց կարիքների բավարարման և նրանց համապատասխան նոր որակի սոցիալական ծառայությունների մատուցման բնագավառում կարևորվում է ինտեգրացված սոցիալական ծառայությունների ստեղծման անհրաժեշտությունը (համայնքում ներդրվելու է առաջիկայում)

Համայնքային սոցիալական աջակցության ծրագրեր՝

- Համայնքապետարանը հայտնել է իր համաձայնությունը միջգերատեսչական սոցիալական համագործակցության ամբողջությամբ միանալու մասին:
- Կատարելագործել համայնքում արդեն ներդրված սոցիալական աշխատողի ինստիտուտը, աշխատակազմի հաստիքացուցակում սահմանել սոցիալական աշխատողի հաստիք: Համայնքի սոցիալական աշխատողի հիմնական իրավունքներն ու պարտականությունները սահմանված են «Սոցիալական աջակցության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով:
- Հաշմանդամության ոլորտում նպատակային ծրագրերն ուղղել հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանությանը, հավասար պայմանների ու հնարավորությունների ապահովմանը, նրանց սոցիալական ներառմանը:
- Սոցիալական շփման, լրացուցիչ օգնության և հոգածության կարիք ունեցող տարեցներների և հաշմանդամություն ունեցող անձանց համար միջազգային դոնոր կազմակերպությունների հետ (<<Կամրջակ>> ՄԲՀԿ, <<Շվեյցարական կարմիր խաչ>>) ստեղծվելու է խնամքի ցերեկային նոր կենտրոն՝ անհրաժեշտ տարաբնույթ սոցիալական աջակցության, կյանքի հարմարավետ հնարավոր պայմանների, ակտիվ կեցության ապահովման և ծերունական մեկուսացման կանխարգելման նպատակով:
- Հայտնաբերել, միջոցներ ձեռնարկել և իրականացնել նպատակային ծրագրեր քաղաքում բնակվող սոցիալապես առավել անապահով ընտանիքներին, կյանքի դժվարին իրավիճակներում հայտնված անձանց սոցիալական պայմանների բարելավման ուղղությամբ:
- Համայնքի ընտանիքների սոցիալական վիճակի շարունակական ուսումնասիրություն, անհրաժեշտության դեպքում դրամական աջակցություն տրամադրում:
- Սոցիալական ծառայություններ մատուցող կազմակերպությունների (պետական, ՀԿ-ներ, ՏԻՄ, միջազգային) կողմից իրականացվող ծրագրերի վերաբերյալ տեղեկատվության հավաքում, ամփոփում և հրապարակում
- Նպաստել համայնքում խնամատար ընտանիքների ինստիտուտի կայացմանը:

- Խթանել փոքր և միջին բիզնեսի զարգացմանը, նոր աշխատատեղերի ստեղծմանը:
- Համայնքի բնակիչներին ընդգրկել վճարովի հասարակական աշխատանքների մեջ:

Համայնքում գործող ոչ կառավարական կազմակերպությունների (ՀԿ-ներ, հիմնադրամներ և այլն) և քաղաքական կուսակցությունների թիվը, անվանումները, գործունեության ուղղվածությունները, գլխավոր հասցեն

Համայնքում առկա հասարակական կազմակերպությունները և հիմնադրամները

	ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՀԻՄՆԱԴՐԱՄՆԵՐ	ՈՒՂՂՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ	ՀԱՍՑԵ
1	Հայկական Կարմիր խաչի Սպիտակի տարածքային գրասենյակ	Առողջապահական	Նորվեգական թաղամաս
2	ՀՀ Երկրապահ կամավորականների միության Լոռու մարզի Սպիտակի տարածքային բաժանմունք	Զոհված ազատամարտիկների ընտ. աջակցություն, հայրենասիրական գաղափարների սերմանում	Ս.Ավետիսյան հրապարակ 62.բն.8
3	Երիտասարդ մարդկանց քրիստոնեական ընկերություն YMCA	Երիտասարդների ժամանցի կազմակերպում, մշակութային, ուսումնական	Այգեստան 170
4	Սպիտակի և տարածաշրջանի ՀՄՊ, աշխատանքի և ՆԳ վետերանների միության խորհուրդ	Վետերանների հիմնահարցեր	Ս.Ավետիսյան 1
5	Համալսարանական կրթությամբ կանանց ասոցիացիա	Կանանց կրթություն, կանանց իրավունքների իրազեկում	Ս. Ավետիսյան 19/8
6	«Սպիտակի մտավորականներ»	Մշակութային և լրատվական ոլորտ	Թորոսյան 24 ժամ.կառույց
7	«Սպիտակ բազե» հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների և շահերի պաշտպանության	ՀՈՒՎ սոցիալական, առողջապահական խնդիրների բարելավում	Ուզբեկական 8/6
8	«Սպիտակ-ֆերմեր»	Համայնքների գլոբալ զարգացում, գյուղատնտեսություն	Ալեք Մանուկյան 5/1

9	«Լիմեն Սպիտակ բարօրություն»	Սոցիալական, առողջապահական, մշակութային	Շվեյցարական 127
10	«Հուտ-լույս»	Փախստականների հիմնահարցեր	Նորվեգական 21
11	«Առաքելություն Հայաստան» ԲՀԿ Սպիտակի սոցիալ վերականգնողական կենտրոն	Սոցիալական խնդիրների բարելավում	Չարենցի 46
12	«Ապագա Սպիտակ» տարածքային զարգացման կենտրոն	Սպիտակցի երիտասարդների համախմբում, նրանց իրազեկվածության և մասնակցության ապահովում տարածաշրջանի խնդիրներին, հասարակական և մշակութային գործընթացներին	Թորոսյան 46
13	Սպիտակի «Շողեր» մանկապատանեկան կենտրոն ԲՀԿ	Երեխաների զարգացում, ազատ ժամանցի կազմակերպում	Շվեյցարական 1
14	«Սպիտակի հելսինկյան իրավապաշտպան խումբ»	Իրավաբանական խորհրդատվություն և աջակցություն, երիտասարդների իրավագիտակցության մակարդակի բարձրացում	Թորոսյան 23/2
15	«Սպիտակի երիտասարդության և կանանց կենտրոն»	Մշակույթ, կրթություն, բնապահպանություն	Ալ.Մանուկյան 1
16	Ավանդական մանածագործության և արհեստների դպրոց	Մշակույթ, տարբեր արհեստների ուսուցում	Իտալական թաղ.
17	<<Երուսաղեմի բժշկական Սուրբ Ղազարի Օրդենը Հայաստանում>> բարեգործական հիմնադրամ	Առողջապահական	Շահումյան 7

Համայնքում առկա քաղաքական կուսակցությունները

- Հայաստանի Հանրապետական կուսակցություն - մշակույթի տուն Ս.Ավետիսյան 1:
- <<Հայ Հեղափոխական Դաշնակցություն>>- Ս. Ավետիսյան փող. 6 շենք:
- <<Բարգավաճ Հայաստան>>- Եռանկյունի թաղ. Շահումյան փող. 3 շենք:
- <<Համախմբում>> - Թորոսյան փող. 6/7:
- <<Հայկական վերածնունդ>> -Կենտրոն 2 թաղ, Թորոսյան փող, շենք 3, Իտալական թաղամաս:

1.8 ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅՈՒՆ

Համայնքում ներկայումս քաղաքաշինական գործունեությունը իրականացվում է առանց հաստատված քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի, համայնքը չունի նաև քաղաքաշինական քարտեզ, քաղաքաշինական կադաստր, քաղաքաշինական կանոնադրություն: Վերջին 4 տարիների ընթացքում համայնքում կառուցապատողներին տրվել է 79 ճարտարապետահատակագծային առաջադրանքներ (կամ նախագծման թույլտվություններ):

Համայնքում առկա են 1 գործող և 3 փակ գերեզմանատներ: Գործող գերեզմանատան զբաղեցրած տարածքը 0126-0050 կադաստրային ծածկագրով 17.29հա է, որը ՀՀ կառավարության 01.06.2006թ. թիվ 1054-Ն որոշմամբ փոխանցվել է համայնքին՝ որպես հատուկ պահպանվող տարածքների նպատակային նշանակության հողամաս, գործառնական դասակարգումը՝ գերեզմանոց: 0569-0012 կադաստրային ծածկագրով 0.28հա մակերեսով հատուկ պահպանվող տարածքների նպատակային նշանակության հողամասում գտնվող Հայրենական Մեծ պատերազմի գերմանացի ռազմագերիների, 0271-0075 կադաստրային ծածկագրով, 1.23հա մակերեսով և 0516-0001 կադաստրային ծածկագրով, 0.71հա մակերեսով հատուկ պահպանվող տարածքների նպատակային նշանակության հողամասերում գտնվող գերեզմանատները փակ են: Գործող գերեզմանատանը կից 0126-0001 կադաստրային ծածկագրով 2.5հա մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության այլ գործառնական դասակարգման հողամասում բնակչության կողմից կատարվում են հուղարկավորություններ:

Հիմնախնդիրներ, նախադեսվող ծրագրային միջոցառումներ

- Համայնքի տարածական համաչափ զարգացումը ապահովելու համար խիստ անհրաժեշտություն է քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի՝ համայնքի գլխավոր հատակագծի և գոտևորման նախագծի մշակումը և հաստատումը:
- ՀՀ կառավարության սահմանած կարգով քաղաքի գլխավոր հատակագծի, և գոտևորման նախագծի մշակում և հաստատում մինչև 2021թ. հունվարի 1-ը, Տարածքային զարգացման հիմնադրամի հետ համագործակցությամբ:
- Համայնքի քաղաքաշինական քարտեզի, քաղաքաշինական կադաստրի, քաղաքաշինական կանոնադրության կազմում և հաստատում:
- Ենթակառուցվածքների քարտեզագրում:
- Սպիտակ համայնքի նոր կադաստրային քարտեզի ձեռքբերում:

- Համայնքային և պետական կառույցների հետ համագործակցությամբ նոր հասցեավորման անցկացում:
- Համայնքային գերեզմանատան տարածքի սահմանազատում, ընդլայնում և արդեն զբաղեցված 2.5հա տարածքի նպատակային նշանակության փոփոխություն, տարածքի բարեկարգում, գրունտային ճանապարհների վերանորոգում:
- Համայնքի կենտրոնական հատվածը Սովխոզային թաղամասին միացնող հուշարձան-կամուրջի վերանորոգում:
- Հուշարձանների և դրանց սպասարկման համար անհրաժեշտ տարածքների բարեկարգում և քարտեզագրում:
- Ինքնակամ կառույցների հաշվառում, օրինականացում:

1.9 ԶՐԱՄԱՏԱԿԱՐԱՐՈՒՄ ԵՎ ԶՐԱՀԵՌԱՅՈՒՄ

Զրամատակարարման և ջրահեռացման համակարգերը կառավարվում է «ՀԶԿ» ՓԲԸ-ի կողմից: Անբավարար է գոյություն ունեցող ջրամատակարարման և ջրահեռացման ցանցի տեխնիկական վիճակը: 2015 թվականին ջրամատակարարման ցանցի 15-20% փոխարինվել է նոր խողովակաշարով: Առկա է 3 ինքնահոս 26 000մ երկարությամբ և 4 ճնշումային 49 000մ երկարությամբ ջրատարեր:

Սպիտակ համայնքի ազգաբնակչությունը խմելու ջուր ստանում է ջրամատակարարման չորս համակարգով.

1.Չախկալի կապտածներից (19 հատ) Չախկալի-Սպիտակ ջրատարով, որի երկարությունը՝ $L=33.8$ կմ, տրամագիծ՝ $d=219-530$ մմ խողովակով, նյութը պողպատից է, արտադրողականությունը՝ $Q=20-50$ լ/վրկ,

2.Շիրակամուտի ինքնաբուխ խորքային հորերից, Շիրակամուտ-Սպիտակ ջրատարով, որի երկարությունը՝ $L=14.5$ կմ, տրամագիծը՝ $d=530$ մմ, նյութը պողպատից է, արտադրողականությունը՝ $Q=25-35$ լ/վրկ,

3.Ջրաշենի խորքային հորերից, Ջրաշեն-Սպիտակ ջրատարով, որի երկարությունը՝ $L=6.5$ կմ, տրամագիծը՝ $d=319$ մմ խողովակով, նյութը՝ թուջ, արտադրողականությունը՝ $Q=30-35$ ր/վրկ,

4.Ղազանչի-Սպիտակ ջրատարով, որի երկարությունը՝ $L=5.3$ կմ, տրամագիծը՝ $d=125$ մմ խողովակով, նյութը՝ պողպատ, արտադրողականությունը՝ $Q=2-4$ լ/վրկ,

Համայնքի ջրամատակարարման համակարգի գործող ՕԿԶ-ն են Չախկալի-Սպիտակ ջրատարի ՕԿԶ 2×2000 մ³ և Ջրաշեն-Սպիտակ ջրատարի ՕԿԶ 1×1000 մ³, որոնց ընդհանուր ծավալը կազմում է 5000մ³:

Ներկայումս քաղաք մուտք գործող ջրատարների ջրերի վարակագերծումը կատարվում է առանձին կառուցված քլորակայաններում: Սակայն համայնքի առանձին թաղամասերում ջրագծերի անորակության պատճառով անընդհատ վթարներ են

տեղի ունենում, որի հետևանքով շատ հաճախ բնակիչներին ջուր չի մատակարարվում, կամ մատակարարված ջուրը չի համապատասխանում սանիտարական պահանջներին:

Բաժանորդների թիվը կազմում է 4244 տնտեսություն՝ ներառյալ տնտեսվարող սուբյեկտները:

Համայնքի կոյուղու ընդհանուր երկարությունը կազմում է 19200մ: Սպիտակ համայնքի կոյուղագիծը կառուցված կոյուղու կոլեկտորների միջոցով, հեռացվում է մինչև Սայաթ-Նովա փողոցի վերջնամասը, որտեղ առանց մաքրման թափվում է <<Փամբակ>> գետի մեջ, կոյուղու մաքրման կայան չլինելու պատճառով: Գետի աղտոտվածությունը նվազեցնելու համար անհրաժեշտություն կա կառուցել կեղտաջրերի մաքրման կայան:

Այգեստան և Քըր-Քըրքորյան փողոցների մի հատվածում չկա կոյուղագիծ:

Սպիտակ համայնքի ավագանու 2016 մայիսի 20-ի թիվ 20-Ա և Սպիտակ համայնքի ղեկավարի 2016 թվականի օգոստոսի 22-ի թիվ 222, թիվ 223, թիվ 224, թիվ 225 և թիվ 226 որոշումներով Սպիտակ համայնքի սեփականություն հանդիսացող հետևյալ գույքը նվիրատվությամբ փոխանցվել է <<Հայջրմուղկոյուղի>> ՓԲԸ-ին:

<<Հայքրմուղկոյուղի>> ՓԲԸ-ին նվիրատվությամբ փոխանցվող գույքը

h/h	Գույքի գտվելու վայրը	Գույքի ծածկագիրը	Գույքի մակերեսը		Գույքի նպատակային նշանակությունը		Հողամասի գործառնական նշանակությունը
			Հողամաս /հա/	Շինություն /քմ/	Հողամաս	Շինություն	
1	Չախկալի կապտաժներից Սպիտակ ջրատարի վրա	06-006-0188-0039	0,064	33,1	Էներգետիկայի, տրանսպորտի, կապի, կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների	Մարիչ հոր	Կոմունալ օբյեկտների հողեր
2	Ղազանչի-Սպիտակ ջրատարի վրա	06-006-188-0022	0,052	31,4	Էներգետիկայի, տրանսպորտի, կապի, կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների	Մարիչ հոր	Կոմունալ օբյեկտների հողեր
3	Գր.Լուսավորիչ թաղամաս 25	06-006-0188-0040	0,3754	402,9 396,4	Էներգետիկայի, տրանսպորտի, կապի, կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների	ՕԿՋ	Կոմունալ օբյեկտների հողեր
4	Թորոսյան փողոց, թիվ 35	06-006-0503-0034	0,3997	40,6 269,0 87,0	Էներգետիկայի, տրանսպորտի, կապի, կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների	Պահակատուն ՕԿՋ ջրավազան	Կոմունալ օբյեկտների հողեր
5	Ս.Ավետիսյան փողոց, թիվ 45	06-006-0516-0006	0,4144	30,0 600,0 600,0	Էներգետիկայի, տրանսպորտի, կապի, կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների	Պահակատուն ՕԿՋ ՕԿՋ	Կոմունալ օբյեկտների հողեր

Համակարգի կառույցները ամբողջությամբ <<Հայքրմուղկոյուղի>> ՓԲԸ-ին նվիրատվությամբ փոխանցելու համար իրականացվում է գույքի ցանկի ճշտման աշխատանքներ:

Հիմնախնդիրներ, նախատեսվող ծրագրային միջոցառումներ

- <<Հայջրմուկոյուղի>> ՓԲԸ-ի կողմից ներդրումային ծրագրերի իրականացում՝ նոր համակարգերի կառուցում այն թաղամասերում (մասնավորապես Բանավան, Այգեստան, Քըրք-Քըրքորյան, Մուրացան) որտեղ բացակայում են ջրամատակարարման և ջրահեռացման համակարգեր:
- Ջրատար խողովակների 70% փոխարինում նոր խողովակաշարերով:
- Չախկալի-Սպիտակ ջրատարի գլխամասում փլված մի քանի կապտաժների փոխարեն անհրաժեշտ է կառուցել նոր կապտաժներ:
- Շիրականուտ-Սպիտակ, Ջրաշեն-Սպիտակ ջրատարների գլխամասում մաքրել ինքնաբուխ խորքային հորերը՝ ջրաքանակ ավելացնելու նպատակով:
- Ղազանչի-Սպիտակ ջրատարի գլխամասում կառուցել քլորակայանի շենք:
- Կապիտալ վերանորոգման աշխատանքներ կատարել ներհամայնքային ջրագծերի և կոյուղագծերի որոշակի հատվածներում, որտեղ կորուստները և խցանումները մեծ քանակություն են կազմում:
- <<Վարպետաց>> թաղամասում խմելու ջրի վնասված խողովակների փոխարինում նորերով:
- Այգեստան թաղամասի և Քըրք-Քըրքորյան փողոցների կոյուղագծի կառուցում:
- Աշխատանքներ իրականացնել բնակչության խմելու ջրի շուրջօրյա մատակարարում ապահովելու ուղղությամբ:
- Խմելու ջրի որակի նկատմամբ ուժեղացնել վերահսկողությանը:

1.10 ԷՆԵՐԳԱՄԱՏԱԿԱՐԱՐՈՒՄ

Սպիտակ համայնքի էներգահամակարգը կառավարվում է «Հայաստանի էլ. ցանցեր» ընկերության կողմից: Առկա է 36 էլ.էնթակայան: Ենթակայանների տրանսֆորմատորների ընդհանուր հզորությունը 2*25 ՄՎտ է: Բարձր լարման էլեկտրագծերի ընդհանուր երկարությունը կազմում է 60 500մ, իսկ ցածր լարմանը՝ 108 500մ: Հանրապետության էլեկտրահամակարգի հետ կապն իրականացվում է 110կվ միաշղթա բարձր լարման <<Արջուտ -1 և 2>> <<Սպիտակ-Ապարան>> բարձրավոլտ գծերով, որոնք անցնում են քաղաքի հեռանկարային սահմանով. Սպիտակ 110/35/10 կվ ենթակայանը սնող 110կվ բարձրավոլտ գծերի համար նախատեսվում է պաշտպանիչ գոտի՝ նորմատիվային պահանջներին համապատասխան: Քաղաքի բնակելի տների,

արտադրական ձեռնարկությունների արտաքին լուսավորության պահանջները բավարարվում են վերը նշված գլխավոր իջեցնող ենթակայաններից: Գործող 6-10 կվ լարման 1 հատ բախշիչ կայանի և 6-10/0.4 կվ լարման 48 հատ իջեցնող ցանցային միատրանսֆորմատորային ենթակայանները /կ.տ.ե/ քաղաքի բնակչության, հասարակական և կենսապահովման օբյեկտների էլեկտրամատակարարումը վերականգնելու համար տեղադրվել են երկրաշարժից հետո ավերված ենթակայանների փոխարեն: Քաղաքի 6-10 կվ լարման մալուխային գծերի երկարությունը 18 կմ է, օդայինը՝ 35 կմ: Էլեկտրամատակարարման բնակիչ-բաժանորդների թիվը 5203 է, փաստացի մատակարարվում է 3794 բաժանորդի: Հանրային հատվածում կա 250 բաժանորդ:

Աղյուսակ 1.10.1 Սպիտակ համայնքի փողոցների լուսավորության համակարգը 2017թ. դրությամբ.

h/h	Փողոցների անվանումը	Լուսատուների քանակը	Հենասյուների քանակ	Լուսավորության համակարգի անցկացման տարեթիվ	Լամպերի տիպը	Փողոցի լայն.(մ)	Սյան բարձր.(մ)	Սյուների հեռավորություն (մ)	Փողոցների նշանակությունը
1	Ս.Ավետիսյան փողոց	45 29	74	2016թ. 1998թ.	Լուսադիոդային, Կոմպակտ Ֆլուորեսցենտ	15	12 7-8	25-30	Մ-3 մայրուղի
2	Շահումյան փողոց	42	32	1998թ., մի հատվածը 2012թ-ին հիմնովին փոխարինվել է	նատրիումային	12-15	8-14	25-30	տեղական նշանակության ճանապարհ
3	Ալ.Մանուկյան փողոց	15	15	2016թ.	Լուսադիոդային	15	12	25-30	տեղական նշանակության ճանապարհ

4	Թորոսյան փողոց	13	13	2010թ.	Կոմպակտ ֆլուորեսցենտ	12	8	25-30	տեղական նշանակության ճանապարհ
5	Մյասնիկյան փողոց	13	13	2000թ.	Կոմպակտ ֆլուորեսցենտ	7	8	25-30	տեղական նշանակության ճանապարհ
6	Ն.Աճեմյան փողոց	14	14	2000թ.	Կոմպակտ ֆլուորեսցենտ	10	8	25-30	տեղական նշանակության ճանապարհ
7	Ուզբեկական թաղամաս	20	20	2010թ.	Կոմպակտ ֆլուորեսցենտ	9	8	25-30	տեղական նշանակության ճանապարհ
8	Իտալական թաղամաս	11	11	2010թ.	Կոմպակտ ֆլուորեսցենտ	8	8	35-40	տեղական նշանակության ճանապարհ
9	Վարպետաց թաղամաս	120		2011թ.	Կոմպակտ ֆլուորեսցենտ	8-12	8	25-30	տեղական նշանակության ճանապարհ
10	Տեր- Սիմոնյան փողոց	41	41	2012թ.	Կոմպակտ ֆլուորեսցենտ	10	8	25-30	տեղական նշանակության ճանապարհ
11	Երևանյան խճուղի	163	163	2012թ.	Կոմպակտ ֆլուորեսցենտ	15	8	25-30	Մ-3 մայրուղի
12	Վանաձորի խճուղի	11	11	2012թ.	Կոմպակտ ֆլուորեսցենտ	12-15	8	25-30	Մ-3 մայրուղի
13	Սայաթ-Նովա փողոց	17	17	2011թ.	Կոմպակտ ֆլուորեսցենտ	8	8	30--35	տեղական նշանակության ճանապարհ
14	Զարենցի փողոց	19	19	2012թ.	Կոմպակտ ֆլուորեսցենտ	10	8	25-30	տեղական նշանակության ճանապարհ

15	Քըրք-Քըրքոյան փողոց	26	26	2012-2016թ.	Կոմպակտ ֆլուորեսցենտ	10	8	30-35	տեղական նշանակության ճանապարհ
16	Թումանյան փողոց	15	15	2012թ.	Կոմպակտ ֆլուորեսցենտ	10	8	25-30	տեղական նշանակության ճանապարհ
17	Պանրագործների փողոց	16	16	2012թ.	Կոմպակտ ֆլուորեսցենտ	10	8	25-30	տեղական նշանակության ճանապարհ
18	Շիրակի խճուղի	19	19	2012թ.	Կոմպակտ ֆլուորեսցենտ	8-10	8	30-35	տեղական նշանակության ճանապարհ
19	Ուփյան փողոց	10	10	2011թ.	Կոմպակտ ֆլուորեսցենտ	7	8	30-35	տեղական նշանակության ճանապարհ
20	Առափնյա փողոց	22	22	2010թ.	Կոմպակտ ֆլուորեսցենտ	6-8	8	35-40	տեղական նշանակության ճանապարհ
21	Ուզբեկական Կ-11 թաղամաս	11	11	2010թ.	Կոմպակտ ֆլուորեսցենտ	6	8	35-40	տեղական նշանակության ճանապարհ
22	Ավտոկայան	4	4	2016թ.	Կոմպակտ ֆլուորեսցենտ	10-12	8	25-30	տեղական նշանակության ճանապարհ
23	Փյունիկ թաղամաս	29	29	2016թ.	Կոմպակտ ֆլուորեսցենտ	8	8	25-30	տեղական նշանակության ճանապարհ
24	Ս.Ավետիսյան 5-րդ նրբանցք	24	24	2016թ.	Կոմպակտ ֆլուորեսցենտ	6-8	7	25-30	տեղական նշանակության ճանապարհ
25	Եռանկյունի թաղամաս	9	9	2016թ.	Կոմպակտ ֆլուորեսցենտ	8	8	25-30	տեղական նշանակության ճանապարհ

Հիմնախնդիրներ, նախադրեսվող ծրագրային միջոցառումներ

- Արտաքին լուսավորության ցանցի վերանորոգում, հիմնանորոգում և արդիականացում:
- Արտաքին լուսավորության ցանցի տեխնիկական վերազինում, էներգախնայողական լուսատուների և այլ ժամանակակից մեթոդների ներդրում:
- Էներգատար տեխնոլոգիաների կրճատում:
- <<Վարպետաց>> թաղամասի էլ.սնուցումը իրականացվում է Լեռնանցք 35կվ ենթակայանից 10կվ քաղաք 1 օդային գծով, որի երկարությունը 20կմ է, այդ պատճառով շատ հաճախ հոսանքազրկվում են մի քանի թաղամասեր: Հուսալի էլեկտրամատակարարում իրականացնելու նպատակով, <<Վարպետաց>> թաղամասի նախագծում տեղ գտավ 2-րդ էլեկտրասնուցման գծի կառուցումը Ջրաշեն 35կվ ենթակայանից, սակայն աշխատանքները ներկայումս անավարտ են: Անհրաժեշտություն կա դրանք ավարտին հասցնել ՀԷՑ-ի և քաղաքաշինության նախարարության համագործակցությամբ:
- <<Վարպետաց>> թաղամասում կառուցված փողոցային լուսավորության համակարգը ավարտական ակտի, տեխպայմանների բացակայության պատճառով հանձված չէ համայնքին և չի շահագործվում: Անհրաժեշտ միջոցառումներ է ձեռնարկվում շինկազմակերպության հետ համակարգը շահագործելու համար:

1.11 ԳԱՀԱՄԱՏԱԿԱՐԱՐՈՒՄ

Սպիտակ համայնքի գազամատակարարումը իրականացվում է «Գազպրոմ Արմենիա» ընկերության կողմից «Սպիտակ» և «ԳԲԿ» ավտոմատ գազաբաշխիչ կայաններից, որոնց ընդհանուր հզորությունը 7600 ն.մ ժամ է. սնումն իրականացվում է Կրասնի մոստ-Վանաձոր-Գյումրի-Արմավիր 325մմ տրամագծով բարձր ճնշման գազատարից: Գոյություն ունի 1 միջին ճնշման 89 716մ երկարությամբ և 1 ցածր ճնշման 151 մ երկարությամբ գազատարեր:

2017թ. հունվարի 1-ի դրությամբ Սպիտակում գազաֆիկացված են 3752 բնակարաններ և առանձնատներ:

Հիմնախնդիրներ և նախադրեսվող ծրագրային միջոցառումներ

- Գազի գիծը հասցված է Հարավ Արևմտյան թաղամաս, սակայն բնակիչները դեռևս չեն օգտվում գազից: Թաղամասի բնակարանները գազաֆիկացնելու համար բնակիչները չեն կարողանում կատարել անհրաժեշտ ներդրումներ՝ սոցիալական վիճակից ելնելով (թաղամասում բնակավում են հիմնականում փախստական ընտանիքներ): Խնդիրը հնարավոր է կարգավորել հովանավորների օգնությամբ:

1.12 ԱՂԲԱՀԱՆՈՒԹՅՈՒՆ, ՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ՄԱՔՐՈՒՄ

Սպիտակ համայնքի սանիտարական մաքրման ենթակա փողոցների, հրապարակների, կամուրջների, մայրերի և այլ կառույցների ընդհանուր մակերեսը կազմում է 4657,91 հազ. քմ: Համայնքում աղբահանության, սանիտարական և ձմեռային մաքրման աշխատանքներն իրականացվում է մրցույթով ընտրված կազմակերպության կողմից: Աղբահանությունը կատարվում է շուրջ 166 բազմաբնակարան շենքերից և շուրջ 3084 մասնավոր տնտեսություններից:

Ձյան մաքրման աշխատանքներում ներգրավվում է տեխնիկա: Սպիտակ համայնքի վարչական տարածքում տեղադրված է թվով 356 մեծ և 50 փոքր աղբաման:

Հիմնախնդիրներ և նախատեսվող ծրագրային միջոցառումներ

Շահագործվող հատուկ նշանակության մեքենա-մեխանիզմի ֆիզիկական մաշվածություն և անբավարար քանակ:

- Աղբահանության վճար վճարողների հաշվառման բազայի ճշտում:
- Աղբահանության վճարների գանձման պարտքերի առկայություն:
- Համայնքի չնախատեսված տարբեր հատվածներում աղբաթափության առկայություն:
- Համայնքում կենցաղային աղբի տեսակավորման անհրաժեշտություն:
- Համայնքային աղբավայրի գրունտային ճանապարհի վերանորոգում և աղբավայրի տարածքի ցանկապատում:
- Աղբամանների թվի ավելացում 250-ով, վերանորոգման ենթակա աղբամանների(100) վերանորոգում:

1.13 ՀԱՄԱՅՆՔԻ ՀՈՂԱՅԻՆ ՖՈՆԴ

Սպիտակ համայնքի տարածքը 2017 թվականի հունվարի 1-ի դրությամբ 6066.75 հեկտար է. այդ թվում՝ համայնքային սեփականության հողերը կազմում են 5052.83 հա, պետական սեփականության հողերը՝ 453.99 հա, քաղաքացիներինը՝ 477.65 հա և իրավաբանական անձանց սեփականությանը՝ 82.29 հա:

105.23 հեկտարից ավել հողեր տարբեր ժամանակներում հատկացվել են համայնքի բնակիչներին, սակայն փաստաթղթեր չեն պահպանվել և ներկայումս առանց իրավաբանական ձևակերպման օգտագործվում են նրանց կողմից:

- ՀՀ կառավարության 10.05.2012թ. թիվ 595 որոշմամբ «Վարպետաց» թաղամասի տարածքը առանձնացվել է որպես քաղաքաշինական գործունեության հատուկ կարգավորման օբյեկտ: Թաղամասում կառուցվել են միայն բնակելի տներ և մնացած մասով ծրագիրը չի իրականացել:

- <<Վարպետաց>> թաղամասի բնակելի տները միայն զբաղեցրած հողամասերով են ստացել իրավունքի պետական գրանցում և փոխանցվել կամ փոխանցվում է (գործընթացը շարունակվում է) բնակիչներին, իսկ տնամերձ հողամասերը մնացել են պետական սեփականություն, սակայն օգտագործվում են բնակիչների կողմից առանց իրավական ձևակերպման:

Հիմնախնդիրներ և նախապեսվող ծրագրային միջոցառումներ

- Առանց իրավաբանական ձևակերպման բնակիչների կողմից օգտագործվող հողամասերի հաշվառում, իրավական ձևակերպում:
- ՀՀ ԿԱ ԱԳԿՊԿ հետ հողային ֆոնդի հաշվառման տվյալների ճշգրտում:
- Հետագա քաղաքաշինական գործունեություն իրականացնելու նպատակով <<Վարպետաց>> թաղամասում փոխել տարածքի կարգավիճակը:
- Առանձնացնել, չափագրել տնամերձ հողամասերը և դրանց նկատմամբ իրավունքի պետական գրանցման հարցը լուծել պետական աջակցությամբ:

1.14 ԲՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՇՐՋԱԿԱ ԲՆԱԿԱՆ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅՈՒՆ

Համայնքի կոյուղին առանց մաքրման թափվում է Փամբակ գետի մեջ և աղտոտում այն, ուստի անհրաժեշտություն կա կեղտաջրերի մաքրման կայանի կառուցման: Սպիտակ համայնքի ջրահեռացման համակարգերը քայքայվել են և ի հայտ են եկել բնականոն հոսքերի խափանման երևույթներ:

Համայնքի բոլոր կանաչ զանգվածների և ծառատնկված վայրերի ընդհանուր մակերեսը կազմում 330.61 հա: Յուրաքանչյուր տարի ստեղծվում են ծաղկանոցներ, էտվում և ձևավորվում են 370 ծառեր, կազմակերպվում է ծառատունկ, իրականացվում է կանաչապատ տարածքների սպասարկման այլ աշխատանքներ:

Սպիտակ համայնքը 2014 թվականի մայիսին միացել է Եվրամիության Քաղաքապետերի դաշնագրին՝ պաշտոնապես հանձն առնելով քաղաքում բարձրացնել էներգիայի արդյունավետությունը և վերականգնվող էներգիայի աղբյուրների օգտագործումը: Դաշնագրին միանալուց հետո կազմվել և համայնքի ավագանու կողմից հաստատվել է Սպիտակ համայնքի կայուն էներգիայի զարգացման գործողության ծրագիրը, որը 2015 թվականի ապրիլի 10-ին ընդունվել է Եվրոպական հանձնաժողովի կողմից: Դաշնագրին միանալուց հետո կարճ ժամանակահատվածում մշակվել և առ այսօր համայնքում իրականացվում են մի շարք ծրագրեր:

Այդ ծրագրերի շրջանակներում նախատեսվում է փոխարինել համայնքում տեղադրված փողոցային լուսավորության մոտ 200 կոմպակտ ֆլուրիսցենտ էլեկտրական 90վտ հզորությամբ լամպերը 60վտ հզորությամբ լուսադիոդային լամպերով: Բացի էներգասպառման նվազումից միջոցառումը պետք է նպաստի փողոցային լուսավորության որակի բարելավմանը՝ նոր լամպերի լուսային անդրադարձի արդյունավետության հաշվին: Տարեկան ակնկալվում է ստանալ մոտ 4.38մվտժ էներգասպառման կրճատում:

Նախատեսվում է նաև փոխարինել համայնքում տեղադրված փողոցային լուսավորության բոլոր 263 բարձր ճնշման նատրիումային 250վտ լամպերը 80վտ հզորությամբ լուսադիոդային լամպերով: Բացի էներգասպառման նվազումից միջոցառումը պետք է նպաստի փողոցային լուսավորության որակի բարելավմանը՝ նոր լամպերի լուսային անդրադարձի արդյունավետության հաշվին: Տարեկան ակնկալվում է ստանալ մոտ 39.35մվտժ էներգասպառման կրճատում:

Էներգախնայողության, էներգիայի արդյունավետության բարձրացմանն ուղղված նոր ծրագրերը հնարավորություն կընձեռնեն, դաշնագրի պահանջի համաձայն, մինչև 2020 թվականը նվազեցնել CO₂ արտանետումները շուրջ 20%-ով՝ օգտագործելով վերականգնելի էներգիան որպես լրացուցիչ էներգիա, ինչը նաև կհանդիսանա կայուն զարգացման երաշխիք՝ նպաստելով շրջակա միջավայրի պահպանությանը:

Հիմնախնդիրներ, նախատեսվող ծրագրային միջոցառումներ

- Շրջակա բնական միջավայրի տարրերի (օդ, ջուր, հող) աղտոտվածության նվազեցմանն ուղղված մեխանիզմների և միջոցառումների մշակում և իրականացում:
- Նոր կանաչ տարածքների հիմնման և պահպանման միջոցառումների իրականացում:
- Համայնքային աղբավայրի գրունտային ճանապարհի վերանորոգում և աղբավայրի տարածքի ցանկապատում:
- Համայնքում կանաչ գոտիների ընդլայնում, նոր ծառերի տնկում, գազոնների մշակում, ծաղկապատում, թփապատում:
- Գետի ափամերձ տարածքներում սանիտարական մաքրման՝ աղբակույտերի վերացման և աղբահանության աշխատանքների կազմակերպում:

1.15 ԲՆԱԿՏԵՍԵՍՈՒԹՅՈՒՆ

Բնակելի և ոչ բնակելի տարածքների սպասարկում

- Համայնքի բազմաբնակարան շենքերի և բնակարանների թիվը՝ 255/1356,
- Համայնքի սեփականություն համարվող բազմաբնակարան շենքերի թիվը՝ 25, բնակարանների թիվը՝ 71,
- Բնակֆոնդի ընդհանուր մակերեսը՝ 166851.03, այդ թվում՝ համայնքային սեփականություն (17976.43 քմ), ֆիզիկական և իրավաբանական անձանց սեփականություն (90781.55 քմ), պետական սեփականություն (58093.05):
- Կիսակառույց բազմաբնակարան շենքերի թիվը՝ 1, լիազորագրային կառավարման մարմինների թիվը՝ 1:
- Համայնքում առկա են 1210 առանձնատներ: Բնակարանով կարիքավոր ընտանիքների թիվը 800 է:

Հիմնախնդիրներ, նախատեսվող ծրագրային միջոցառումներ

- Բնակելի ֆոնդի պահպանման, շահագործման, նորոգման և սպասարկման աշխատանքների կազմակերպում ու իրականացում:
- Համայնքային սեփականություն հանդիսացող գույքի վարձավճարների, գույքահարկի և հողի հարկի գումարների, աղբահանության, ինչպես նաև համայնքի բյուջե մուտքագրվող այլ գումարների հավաքագրման աշխատանքների արդյունավետության բարձրացում:
- Քաղաքացիների հաշվառման աշխատանքների կազմակերպում:
- Թաղամասերի զարգացմանն ուղղված ընթացիկ և հեռանկարային ծրագրերի մշակում:
- Բազմաբնակարան շենքերի բնակարանների հասարակական նպատակով հաշվառում, նպատակային փոփոխության ապահովում, արդյունքում հարկային եկամուտի ավելացում:
- Բազմաբնակարան շենքերի նկուղների (հասարակական օբյեկտների նշանակությամբ օգտագործվող) հաշվառում, պետական գրանցում:
- Բակային տարածքների անբարեկարգ վիճակ:
- Խաղահրապարակների բացակայություն:

1.16 ՏՐԱՆՍՊՈՐՏ, ՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Սպիտակ համայնքը գտնվում է տրանսպորտային ցանցով առավել ապահովված գոտում: Սպիտակ համայնքի վարչական տարածքով են անցնում Վրաստանի, Ռուսաստանի /Երևան- Գյումրի-Սպիտակ-Վանաձոր-Մոսկվա/ և Թուրքիայի հետ կապող երկաթուղիները, Մ-3 «Մարգարա-Վանաձոր-Տաշիր-Վրաստանի սահման» և Մ-7 <<Մ-3- Սպիտակ-Գյումրի-Թուրքիայի սահման>> միջպետական նշանակության ավտոճանապարհները: Սպիտակ համայնքը շրջակա բնակավայրերի հետ կապված է տեղական նշանակության ճանապարհներով:

Համայնքում գոյություն ունի 3 ավտոմոբիլային միաթռիչք և 1 երկաթուղային միաթռիչք 6 x 22 չափերի բավարար տեխնիկական վիճակի կամուրջներ:

Համայնքում 2017թ.հունվարի 1-ի դրությամբ գրանցված է 5057 անձնական և 1789 արտադրական ձեռնարկությունների ավտոմոբիլ: Սպիտակ համայնքում գործում են թվով 6 միկրոավտոբուսային երթուղիներ և հասարակական տրանսպորտի սպասարկման 7 կանգառներ:

Նշված երթուղիները պայմանագրային հիմունքներով սպասարկում են երթուղիների սպասարկման իրավունքի հատկացման համար անցկացված մրցույթներում հաղթող ճանաչված 2 մասնավոր կազմակերպություններ:

Ներհամայնքային գրունտային փողոցներում պարբերաբար իրականացվում են նորոգման աշխատանքներ:

Աղյուսակ 1.16.1 Ներհամայնքային ասֆալտապատ փողոցների և ճանապարհների մակերեսը, դրանց վիճակը.

Փողոցի անվանումը	Մակերեսը քմ	Ընդհանուր վիճակը	Նորոգման/վերականգնման/ փոխարինման կաիք
Իտալական թաղամաս	10 800	բավարար	300քմ ենթակա է փոսային նորոգման
Չարենցի փողոց	10 160	բավարար	900քմ ենթակա է փոսային նորոգման
Շահումյան փողոց	14 400	վատ	6480քմ ենթակա է հիմնանորոգման,

Թորոսյան փողոց	5 730	վատ	5730քմ ենթակա է հիմնանորոգման,
Կենտրոն 1 թաղամաս	300	բավարար	300քմ ենթակա է փոսային նորոգման,
Ալ. Մանուկյան 1-ին նրբանցք	3 920	բավարար	100քմ ենթակա է փոսային նորոգման,
Ս.Ավետիսյան հրապարակ	800	վատ	800քմ ենթակա է հիմնա նորոգման,
Թումանյան փողոց	14 400	վատ	10 000քմ ենթակա է հիմնանորոգման, 450քմ ենթակա է փոսային նորոգման
Այգեստան թաղամաս	12 000	վատ	12 000քմ ենթակա է հիմնանորոգման
Մյասնիկյան փողոց	2 100	բավարար	100քմ ենթակա է փոսային նորոգման
Սայաթ-Նովա փողոց	4 200	վատ	3300քմ ենթակա է հիմնանորոգման
Շիրակի խճուղի	5 600	բավարար	800քմ ենթակա է փոսային նորոգման
Քըրք-Քըրքորյան փողոց	6 600	վատ	6 600քմ ենթակա է հիմնանորոգման
Առափնյա փողոց	5 000	վատ	2 800քմ ենթակա է փոսային նորոգման

Աղյուսակ 1.16.2 Ներհամայնքային գրունտային փողոցների վիճակը.

Հ/հ	Փողոցի անվանումը	Մակերեսը /քմ/	Վիճակը
1	Շվեցարական	10 200	վատ
2	Գրիգոր Լուսավորիչ	10 000	վատ
3	Ուզբեկական Կ-5	1 800	վատ
	Ուզբեկական Կ-11	4 700	վատ
5	Էստոնական	3 500	վատ
6	Տաշիր	6 600	
7	Խնկոյան (Խնկոյանից Այգեստան տանող հատվածը)	1 400	վատ
8	Այգեստան-2(4-րդ դպրոցի հարևանությամբ հատվածը)	875	վատ
9	Այգեստան-1	6 240	վատ
10	Այգեստան-2(մարզադպրոց տանող հատվածը)	2 700	վատ
11	Պանրագործներ	4 600	վատ
12	Քրք Քրքորյան	8 000	վատ

13	Մուրացան	6 000	վատ
14	Առափնյա	6 120	վատ
15	Սայաթ-Նովա	4 080	վատ
16	Սուրեն Ավետիսյան (նրբանցքներ)	5 100	վատ
17	Շահումյան (նրբանցքներ)	1 000	վատ
18	Փյունիկ	3 000	վատ

Ընդամենը 85 915 քմ գրունտային ճանապարհի վերանորոգում՝ հողային պաստառի հարթեցում ավտոգրեյդերով:
 Փողոցների երթևեկությունը ներկայումս լուսակիրների միջոցով չի կարգավորվում, որը դժվարություններ է առաջացրել անվտանգ երթևեկության համար:

Հիմնախնդիրներ, նախատեսվող ծրագրային միջոցառումներ

- Հասարակական տրանսպորտի կանգառների բարեկարգում:
- Հասարակական տրանսպորտի հարմարեցում՝ հաշմանդամների սպասարկմանը:
- Սպիտակ համայնքի 2950քմ ընդհանուր մակերեսով փողոցների փոսային նորոգում և 44910քմ ընդհանուր մակերեսով փողոցների հիմնանորոգում:
- Հասարակական տրանսպորտի 2 նոր կանգառների կառուցում (Գերմանական թաղամաս, Օդկայան թաղամաս):
- Փողոցների երթևեկությունը կարգավորելու նպատակով կարգավորող նշանների թարմացում, լուսակիրների տեղադրում, փողոցների գծանշումների վերականգնում և թարմացում:

1.17 ՀԱՆԳՍՏԻ ԳՈՏԻՆԵՐ, ԶՐՈՍԱՅԳԻՆԵՐ, ԽԱՂԱՀՐԱՊԱՐԱԿՆԵՐ, ԲԱԿԱՅԻՆ ՏԱՐԱԾՔՆԵՐ

Իրավիճակի գնահատում

Սպիտակ համայնքն ունի 1 զբոսայգի, 14 խաղահրապարակ, 1 հանգստի գոտի, 1 մերձակա անտառային գոտի, բազմաբնակարան բնակելի շենքերի բակային տարածքներ:

Մերձակա անտառային գոտին գտնվում է լավ վիճակում:

Զբոսայգում վերանորոգման աշխատանքներ իրականացվել են 1990-ական թվականներին: Արհեստական լճի հատակը քայքայված է, կարուսեղները խորհրդային ժամանակաշրջանից են, ներկայումս դրանք շահագործման համար պիտանի չեն: Առանձին մասերում վնասված է նաև Հայրենական Մեծ պատերազմի զոհերի հիշատակին կառուցված հուշարձանը:

Որոշ բազմաբնակարան բնակելի շենքերի բակային տարածքներ գտնվում են անբարեկարգ վիճակում:

Հիմնախնդիրներ, նախատեսվող ծրագրային միջոցառումներ

- Զբոսայգու հուշարձանի վերանորոգում, աստիճանների հարթակների ասֆալտապատում:
- Նոր կարուսեղների ձեռքբերում, տեղադրում:
- Զբոսայգու տարածքի ընդհանուր բարեկարգում, կանաչապատում:
- Քաղաքային զբոսայգու լճամերձ տարածքում մարզասարքերի տեղադրում:
- Խաղահրապարակների նորոգում, նորերի տեղադրում:
- Մերձակա անտառային գոտու պահպանում, խնամք և վերարտադրություն:
- 8 000քմ բազմաբնակարան բնակելի շենքերի բակային տարածքների հիմնանորոգում:

1.18 ԱՂԵՏՆԵՐԻ ՌԻՍԿԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

Իրավիճակի գնահատում

Վերջին տասնամյակների ընթացքում զգալիորեն ավելացել է բնական աղետների հաճախականությունը և դրանց ուղեկցող մարդկային և նյութական կորուստների չափը:

Համայնքի կայուն զարգացման համար աղետների ռիսկերի գնահատումը և արդյունավետ կառավարումը կարևորագույն նախապայման է:

Սպիտակ համայնքը գտնվում է սեյսմիկ ակտիվ գոտում, ուստի երկրաշարժերը մեծ վտանգ են ներկայացնում համայնքին: Կլիմայի հետ կապված աղետները՝ երաշտները և հեղեղումները, նույնպես զգալի վնաս են հասցնում համայնքի տնտեսությանը: Համայնքը կարիք ունի ռիսկի կառավարման տեղեկատվության հավաքագրման և օգտագործման համակարգի, աղետների ռիսկի կենտրոնացված տվյալների բազայի և ռիսկի քարտեզավորման համակարգերի: Անհրաժեշտություն կա տեղական մակարդակով սկսել աղետների ռիսկի կառավարման (ԱՌԿ) շրջանակներում խոցելիության և կարողությունների գնահատման (ԽԿԳ), ինչպես նաև դրա իրականացման գործընթաց:

Հիմնախնդիրներ, նախադեսվող ծրագրային միջոցառումներ

- ՀՀ կառավարության 25.10.2012 թվականի թիվ 1351-Ն որոշման համաձայն սեյսմիկ ռիսկի գնահատման քարտեզի ձեռքբերում:
- Բնակչության իրազեկում:

1.19. ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Համայնքում զարգացած է գյուղատնտեսության հետևյալ ճյուղերը՝ դաշտավարություն, անասնապահություն, այգեգործություն և այլն:

Համայնքի ոռոգելի գյուղատնտեսական նշանակության հողատարածքների ընդհանուր մակերեսը կազմում է 213 հա, առկա է 9 գյուղատնտեսական տեխնիկա: Համայնքում խոշոր և մանր եղջերավոր անասունների թիվը 2017թ.հունվարի 1-ի դրությամբ կազմում է 1920 խոշոր և 253 մանր, խոզեր 196, թռչուններ 181661 թև, որից 180000-ը՝ Սպիտակի թռչնաֆաբրիկայում, մեղվաընտանիքներ 752 հատ: Գյուղատնտեսական մթերքներից համայնքում արտադրվում է կաթ, պանիր, միս, թռչնի միս, ձու, մեղր:

Ամեն տարի սահմանված կարգով ու ժամկետներում կազմակերպվում է անասնազխաքանակի հաշվառման աշխատանքներ, ժամանակին ու պատշաճ կատարվել է կենդանիների հիվանդությունների կանխման հակահամաճարակային միջոցառումներ: Պետական աջակցությամբ հողօգտագործողներին տրամադրվում է կարտոֆիլ, գարու, ցորենի բարձրակարգ սերմացուներ, դիզվառելիք:

Հիմնախնդիրներ և նախադեսվող ծրագրային միջոցառումներ

- Գյուղատնտեսական նշանակության հողամասերի հողատեսքերի ճշգրտում և քարտեզի ձեռքբերում:
- Ոռոգման ցանցի վերանորոգում:
- Կենդանիների հաշվառման և համարակալման համակարգի ներդրում:

1.20 ԳՈՎԱԶԴ, ԱՌԵՎՏՈՒՐ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՈՒՄ

Համայնքի տարածքում առևտրի, հասարակական սննդի և սպասարկման ոլորտի օբյեկտների ընդհանուր թիվը կազմում է 163, այդ թվում՝
առևտրի օբյեկտներ- 144,
հանրային սննդի օբյեկտներ – 5,
սուպերմարկետ- 1,
խաղատներ, զվարճանքի, շահումով խաղերի օբյեկտներ-2,
բենզինի լցակայաններ – 6,
գազի լիցքավորման կետեր – 5,
գյուղատնտեսական արտադրանքի շուկա – 0:

Սպիտակ համայնքում անհավասարաչափ են տեղաբաշխված առևտրի, հանրային սննդի, սպասարկման ծառայություններ մատուցող օբյեկտները, իսկ կենտրոնական փողոցներին հարող տարածքները և մայրերը գերիազեցած են կրպակներով ու տաղավարներով, որոնցից շատերն արդեն իսկ ծառայում են փողոցային առևտուր իրականացնողների համար որպես պահեստներ: Ինչպես այդ, այնպես էլ պարենային, ոչ պարենային ապրանքների և գյուղմթերքների բացօթյա առևտուրը ենթակա է կանոնակարգման:

Գովազդը համարվում է ճարտարապետական միջավայրի ձևավորման հիմնական տարրերից մեկը: Համայնքում զբոսաշրջության զարգացման և հյուրերին անհրաժեշտ տեղեկատվություն տրամադրման համար անհրաժեշտ է հյուրանոցի, համայնքի հիմնական մշակութային օջախների, հասարակական սննդի կետերի գտնվելու վայրերի վերաբերյալ խորհրդանշող վահանակներ: Սպիտակ համայնքի տարածքում 2017թ. հունվարի 1-ի դրությամբ տեղադրված են 11 արտաքին գովազդային նյութեր՝ 27 գովազդային վահանակների և 9 հենասյուների վրա:

Գովազդի ոլորտը համայնքում կարգավորվում է «Տեղական տուրքերի և վճարների մասին» ՀՀ օրենքով: Ըստ այդ օրենքի՝ ավագանին սահմանել է մեկ քմ-ի համար հետևյալ գովազդային սակագները՝

ա) ալկոհոլային (սպիրտի պարունակությունը մինչև 20 ծավալային տոկոս) արտադրանք գովազդի համար՝ 2000 (երկու հազար) դրամ,

բ) թունդ ալկոհոլային (սպիրտի պարունակությունը 20 և ավելի ծավալային տոկոս) արտադրանք

գովազդող արտաքին գովազդի համար՝ 3500 (երեք հազար հինգ հարյուր) դրամ,

գ) այլ արտաքին գովազդի համար՝ 1500 (հազար հինգ հարյուր) դրամ,

դ) դատարկ գովազդային վահանակների համար՝ համայնքի վարչական տարածքում այլ արտաքին գովազդ տեղադրելու համար սահմանված տուրքի 25 %-ի չափով,

ե) եթե արտաքին գովազդ տարածող գովազդակիրը տեղաբաշխել և տարածել է իր կազմակերպության գովազդը՝ համայնքի վարչական տարածքում այլ արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար սահմանված տուրքի 10 %-ի չափով:

Հիմնախնդիրներ, նախապեսվող ծրագրային միջոցառումներ

- Ձկանոնակարգված բացօթյա առևտուր:
- Համայնքում գործող գյուղամթերքի շուկայի անբարեկարգ վիճակ և թերբեռնվածություն:
- Համայնքի փողոցներում տեղակայված կրպակների (տաղավարների) ոչ հրապուրիչ և անբարեկարգ վիճակ:
- Գովազդային վահանակների անբավարար քանակ և որակ:
- Տեղեկատվական սարքավորումների բացակայություն:

1.21 ԿՐԹՈՒԹՅՈՒՆ

Նախադպրոցական կրթություն

Համայնքի ենթակայությամբ գործում է 2 նախադպրոցական ուսումնական հաստատություն, որտեղ հաճախում են 240 երեխաներ: Թիվ 1 նախադպրոցական ուսումնական հաստատության շենքային պայմանները հարմարեցված են, 3-6 տարեկան երեխաների թվի ավելացմամբ պայմանավորված՝ կառուցվում է նոր մանկապարտեզի շենքը: Մեծ առաջընթաց է արձանագրվել նախադպրոցական ուսումնական հաստատությունների սննդի տեսականու և որակի բարելավման ուղղությամբ:

Հ/հ	Նախադպրոցական ուսումնական հաստատություններ	Խմբերի քանակը	Երեխաների թիվը		Դաստիարակների և մանկավարժների թիվը	Օժանդակ աշխատողների թիվը	Հասցե	Շենքային պայմաններ	Շենքի պատկանելությունը
			Փաստացի	Նախագծային					
1	<<Սպիտակի թիվ 1 ՆՈՒՀ>> ՀՈԱԿ	2	60	60	5	6	Սպիտակ Ուզբեկական թաղ.	Հիմնական շինություն	Թիվ 8 միջն. դպրոց վարձակալ.
2	<<Սպիտակի թիվ 2 ՆՈՒՀ >> ՀՈԱԿ	6	180	180	16	14	Սպիտակ Շահումյան 10	Ոչ տիպային շինություն	Համայնքային
	Ընդամենը	8	240	240	21	20			

Հիմնախնդիրներ, նախադրեսվող ծրագրային միջոցառումներ

- ՆՈՒՀ-ի նոր՝ տիպային շենքի կառուցում 150 երեխայի համար:
- Թիվ 2 նախադպրոցական ուսումնական հաստատության շենքի ընթացիկ վերանորոգում:
- Թիվ 2 նախադպրոցական ուսումնական հաստատության շենքի տարածքի ցանկապատում:
- Գույքի ձեռքբերում:
- ՆՈՒՀ-երի խաղահրապարակների նորացում:
- ՆՈՒՀ-երի աշխատակիցների շարունակական վերապատրաստում, թեմատիկ սեմինարների մասնակցություն:

- ՆՈՒՀ-երի երեխաների սննդի կազմակերպման նկատմամբ ծնողների մասնակցությամբ շարունակական վերահսկողության ապահովում:
- ՆՈՒՀ-երում ծնողական խորհրդի դերի բարձրացում:

Հանրակրթական դպրոցներ

Համայնքում գործում են 8 դպրոցներ՝ 1 միջնակարգ, 5 հիմնական, 1 ավագ և 1 հատուկ դպրոցներ, որոնք տեղավորված են հարմարավետ և լուսավոր շենքերում: Աշակերտների թիվը՝ 1712, աշխատողների թիվը՝ 323, շենքերի վիճակը՝ լավ: Թիվ 8 միջնակարգ դպրոցը գազաֆիկացված չէ, ջեռուցվում է էլեկտրաէներգիայով:

Հանրակրթական դպրոցների աշակերտների թվաքանակը

Ուս. տարի	ԴՊՐՈՑՆԵՐ Աշակերտների թիվ								ԸՆԴԱՄԵՆԸ
	Թիվ 1 հիմն. դպրոց	Թիվ 2 հիմն. դպրոց	Ավագ դպրոց	Թիվ 4 հիմն. դպրոց	Թիվ 5 հիմն. դպրոց	Թիվ 3 հիմն.դպրոց	Թիվ 8 միջն.դպրոց	Թիվ 1 Հատուկ դպրոց	
2016-2017	376	332	289	139	89	129	308	50	1712
2015-2016	369	317	331	147	74	119	280	71	1708
2014-2015	333	293	387	145	63	117	266	100	1704
2013-2014	308	286	428	156	68	117	241	115	1719

Հանրակրթական դպրոցների ուսուցիչների /օժանդակ աշխատողների/թվաքանակը

Ուս. տարի	ԴՊՐՈՑՆԵՐ								ԸՆԴԱՄԵՆԸ
	ուսուցիչների / օժանդակ աշխատողների թիվ								
	Թիվ 1 հիմն. դպրոց	Թիվ 2 հիմն դպրոց	Ավագ դպրոց	Թիվ 4 հիմն դպրոց	Թիվ 5 հիմն դպրոց	Թիվ 3 հիմն.դպրոց	Թիվ 8 միջն.դպրոց	Թիվ 1 հատուկ	
2016-2017	35/14	39/19	32/13	28/9	18/9	23/9	31/7	20/17	226/97
2015-2016	36/14	39/19	38/12	23/9	17/7	25/8	26/8	35/17	239/94
2014-2015	40/13	39/17	38/12	29/9	21/7	23/8	30/9	35/22	255/97
2013-2014	40/13	37/16	40/12	30/9	20/7	25/8	27/11	18/21	237/97

Պեդական քոլեջ

Համայնքում գործում է նաև <<Սպիտակի պետական քոլեջ>> ուսումնական հաստատությունը, որտեղ սովորում են 102 ուսանող, աշխատակիցների թիվը՝ 28:

Ուստարին	Մանկավարժների թիվը	Ուսումնաօժանդակ աշխ. թիվը	Ուսանողների թիվը
2016-2017	22	6	102
2015-2016	26	5	123
2014-2015	29	5	133
2013-2014	28	5	142

**1.22 ՄՇԱԿՈՒՅԹ, ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ՀԵՏ ՏԱՐՎՈՂ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ
Երաժշտական և գեղարվեստի դպրոցներ**

Սպիտակի համայնքապետարանի ենթակայությամբ գործում են համայնքի երաժշտական և գեղարվեստի դպրոցները, որտեղ հաճախում են համապատասխանաբար 120 և 63 երեխաներ և ներգրավված են շուրջ 35 աշխատողներ:

Դպրոցները տեղավորված են լուսավոր և հարմարավետ շենքերում, ուսուցիչները ունեն համապատասխան մասնագիտական կրթություն:

Աղյուսակ 1.22.1 Սպիտակի համայնքի երաժշտական և գեղարվեստի դպրոցներ, 2017թ.

Հ/հ	Դպրոցի անվանումը	Օբյեկտի նախագծային հզորությունը /քմ/	Աշակերտների թիվը		Ուսուցիչների թիվը	օժանդակ աշխատողների թիվը	Հասցե	Շենքային պայմաններ	Շենքի պատկանելությունը
			Փաստացի	Նախագծային					
1.	<<Սպիտակի երաժշտական դպրոց կրթադաստիրակչական ուսումնական հաստատություն>> ՀՈԱԿ	593 մ²	120	200	20	5	ք. Սպիտակ, Շահումյան 105	Հիմնական տիպային կառույց	ՀՀ սեփ
2.	<<Սպիտակի գեղարվեստի դպրոց կրթադաստիրակչական ուսումնական հաստատություն>> ՀՈԱԿ	545,50 մ²	63	100	5	5	ք. Սպիտակ, Շահումյան	Հիմնական տիպային կառույց	ՀՀ սեփ

Երաժշտական դպրոց՝ խմբերի թիվը՝ 6 / 2 երգչախումբ, 1 ջութակի համույթ, 1 քանոնի համույթ, 1 դիոլահարների համույթ և 1 նվագախումբ/, բաժինների թիվը՝ 4, /դաշնամուրային, լարային, ազգային և վոկալ/ աշակերտների թիվը 120, աշխատակիցների թիվը՝ 25: Ուսուցիչներն ունեն համապատասխան մասնագիտական կրթություն, նկատելիորեն բարձրացել է ուսման որակը, աշխատողների պատասխանատվությունը: Զգալի հաջողությունների են հասել երաժշտական դպրոցի սաները՝ մասնակցելով մի շարք մրցույթ-փառատոների՝ <<Երգող Հայաստան>>, <<Վերածնունդ>> և այլն: Պարբերաբար դպրոցը համալրվում է նաև երաժշտական նոր գործիքներով, մասնավորապես՝ 2016թ. ապրիլին մեր համաքաղաքացի Արարատ Հայդեյանի միջնորդությամբ դպրոցին նվիրաբերվեց 2 ջութակ, 2 կիթառ, 1 շեփոր:

Հիմնախնդիրներ, նախապեսվող ծրագրային միջոցառումներ

- Դպրոցի շենքի նկատմամբ իրավունքի ձեռքբերում:
- Շենքի վերանորոգում:
- Գույքի ձեռքբերում:
- Երգչախմբի և նվագախմբի սաների համար համերգային արտահագուստների ձեռքբերում:

Գեղարվեստի դպրոց՝ խմբերի թիվը՝ 9, աշակերտների թիվը՝ 63, աշխատակիցների թիվը՝ 10: Դպրոցը գործում է լուսավոր, հարմարավետ շենքում, որտեղ հիմնական ծրագրերից բացի զարգացնում են նաև դեկորատիվ-կիրառական արվեստի ազգային և ավանդական ճյուղեր՝ խեցեգործություն, ասեղնագործություն, գորելեն: Ուսուցիչներն ունեն համապատասխան մասնագիտական կրթություն, նկատելիորեն բարձրացել է ուսման որակը, աշխատողների պատասխանատվությունը: Դպրոցի սաները մշտապես մասնակցում են համաքաղաքային, մարզային և հանրապետական մրցույթների և փառատոների՝ արժանանալով դիպլոմների, պատվոգրերի, շնորհակալագրերի, տարբեր մրցանակների: Գեղարվեստի դպրոցը որպես Լոռու մարզի լավագույն կրթամշակութային հաստատություն մասնակցել է հանրապետական <<Արտ-էքսպո>> ցուցահանդեսին, արժանացել մասնագետների բարձր գնահատականին: Դպրոցում մշտապես գործող պատկերասրահը պարբերաբար թարմացվում է գունանկար, գծանկար, գորելեն, դեկորատիվ-կիրառական արվեստի ցուցանմուշներով: Սերտորեն համագործակցելով Գերմանիայում բնակվող դպրոցի նախկին ուսուցիչ Արարատ Հայդեյանի հետ, նրա հովանավորությամբ շարունակվում են դպրոցի սաների և ուսուցիչների փոխայցելությունները Գերմանիայի Դաշնություն, ուր նրանք մասնակցում են միջազգային ցուցահանդեսների և վարպետության դասերի: 2014թ. դպրոցը մշակութային կրթության ոլորտում համարվել է Լոռու մարզի հենակետային ուսումնական հաստատություն:

Հիմնախնդիրներ, նախապեսվող ծրագրային միջոցառումներ

- Շենքի նկատմամբ իրավունքի ձեռքբերում:
- Գույքի ձեռքբերում:
- Կապիտալ վերանորոգում:

Մշակույթի տուն

Մշակույթի տանը գործում են պարի, երգի և թատերական մեկական խմբեր, որոնցում ընդգրկված են շուրջ 42 սաներ: Մշակույթի տան գործունեությունը նպատակաուղղված է շնորհալի երեխաների և նրանց տաղանդի հայտնաբերմանը:

Մշակույթի տան պարային խմբերը, երգի և տիկնիկային ստուդիայի սաները մշտապես մասնակցում են մարզային և հանրապետական մրցույթների ու փառատոների և հաճախակի վերադառնում մրցանակներով, դիպլոմներով ու շնորհակալագրերով:

Այստեղ կազմակերպվում են միջոցառումներ նվիրված ՀՀ պետական տոներին, հոբելյանական և հիշարժան տարեթվերին: 2016թ. ձեռք է բերվել նոր ձայնալուսային տեխնիկա և սարքավորումներ:

Հ/հ	Անվանումը	Օբյեկտի նախագծ. հզորությունը /մարդ/		Օբյեկտի նախագծ. հզորությունը /քմ/	Աշխատողների թիվը	Հասցե	Շենքային պայմաններ	Շենքի պատկանելությունը /կամ կառույցի/
		Դահլիճի նստատեղ	մարդ					
1	<<Սպիտակի մշակույթի տուն>> ՀՈԱԿ	390	390	2527,25 քմ	12	Ք.Սպիտակ Ա.Ավետիսյան 1	Տիպային հիմնական	ՀՀ կառավարություն

Հիմնախնդիրներ, նախապեսվող ծրագրային միջոցառումներ

- Մշակույթի տան շենքի նկատմամբ իրավունքի ձեռքբերում:
- Կապիտալ վերանորոգում:
- Զեռուցման համակարգի փոխում:
- Սանհանգույցների վերանորոգում:
- Խմբային սենյակների ավելացում:
- Մշակույթի տան թատերական խմբի և նոր համույթների ստեղծում:
- Մասնագետների վերապատրաստում, նոր մասնագետների ներգրավում:

Գրադարան

Համայնքում գործում է մեկ քաղաքային գրադարան, որի գրքային ֆոնդը կազմում է 29153 օրինակ գիրք ու բրոշյուր և 1030 օրինակ ամսագրեր ու լրագրեր: Գրադարանի թանգարանային բաժնի հիմնական ցուցանմուշների թիվը կազմում է 197 և գիտաօժանդակ նյութեր՝ 1321: Ընթերցողների թիվը՝ 2436 մարդ: Թանգարանի այցելուների թիվը՝ 2918 մարդ: Գրադարանում իրականացվում են <<Գրադարանային շաբաթ>>, <<Գիշերային գրադարան>>, <<Թանգարանային գիշեր>> ծրագրերը և բազմաբնույթ այլ միջոցառումներ, որոնցում մեծ ուշադրություն է դարձվում երիտասարդության հետ տարվող աշխատանքներին՝ օգտագործելով նրանց ներուժը տարբեր միջոցառումներ կազմակերպելու համար: 2016թ. ընթացքում գրադարանային ֆոնդը համալրվել է ևս 455 կտոր գրքով: Գրադարանն ունի գույքային և նորոգման կարիքներ:

Սպիտակ համայնքի գրադարանի վերաբերյալ տվյալներ, 2017թ.

Գրադարանի անվանումը	Օբյեկտի նախագծ. հզորությունը /քմ/	Ընթերցողների թիվը	Աշխատողների թիվը	Հասցե	Շենքային պայմաններ	Շենքի պատկանելու թյունը/կամ կառույցի/
<<Սպիտակի քաղաքային գրադարան>> ՀՈԱԿ	335	2436	15	Ք.Սպիտակ Ա.Ավետիսյան 1	Հարմարեց վաճ քարաշեն,	<< կառավարու թյուն

Հիմնախնդիրներ, նախատեսվող ծրագրային միջոցառումներ

- Շենքային հիմնանորոգում:
- Թանգարանային բաժնի հիմնավոր առանձնացում մետաղյա կոնստրուկցիաներով, անվտանգության համակարգի տեղադրում, ապակեպատ միջնորմների տեղադրում:
- Տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառման ցածր մակարդակ.
- Ցուցասրահներում և ֆոնդապահոցներում ջերմային ռեժիմի պահպանման դժվարություն.
- Թանգարանային նմուշների անվտանգության համակարգի արդիականացման կարիք.

- Զեռուցման համակարգերի ներդրման կարիք:
- Օդափոխության համակարգի տեղադրում:
- Գույքի ձեռքբերում:
- Գրքային ֆոնդի համալրում:

1.23 ՖԻԶԿՈՒԼՏՈՒՐԱ ԵՎ ՍՊՈՐՏ

Մարզադպրոցն ունի երկու մասնաշենք: Մարզադպրոցում գործում են 14 խումբ 6 մարզաձևից /3 ֆուտբոլի, 4 սամբոյի, 1 ձյուդոյի, 2 ազատ ոճի ըմբշամարտի, 2 բռնցքամարտի և 2 շախմատի/ սաների թիվը՝ 148, աշխատակիցների թիվը՝ 16: Առաջին մասնաշենքում առկա է 1 դահլիճ՝ 450 քմ., շախմատի 1 սենյակ՝ 18քմ, բռնցքամարտի 1 դահլիճ՝ 144քմ., ֆիզիկական պատրաստության 1 դահլիճ՝ 72քմ., 2 հանդերձարան 42 քմ, 2 լողասենյակ 26 և 16 քմ., սանհանգույց և գրասենյակներ: 2015 թվականին շահագործվեց մանկապատանեկան մարզադպրոցի նոր մասնաշենքը՝ 120 նստատեղով, 1 բուժկետ՝ 17,1 քմ., տղաների և աղջիկների հանդերձարաններ՝ յուրաքանչյուրը 23,3քմ., կառավարման և սպասարկման սենյակ՝ 12,5քմ., մարզիչների սենյակ, 2 լողասենյակ իր սանհանգույցներով և 2 առանձին սանհանգույց:

Հ/հ	Անվանումը	Օբյեկտի նախագծային հզորությունը (մ2)	Մարզիկների թիվը		Մարզիչների թիվը	Օժանդակ աշխատողների թիվը	Հասցե	Շենքային պայմաններ	Շենքի պատկանելությունը
			Փաստացի	Նախագծային					
1	<<Սպիտակի թիվ 1 մանկապատանեկան մարզադպրոց>> ՀՈԱԿ	1026	148	140	11/8մարզիչ	5	ք. Սպիտակ, փ. Այգեստան	Տիպային	ՀՀ կառավար
2	Կաթսայատուն	16					ք. Սպիտակ, փ. Այգեստան		ՀՀ կառավար

Հ/հ	Մարզաձևերը/ խմբերը	Մարզիկների թիվը	Մարզիչների թիվը
1	Ազատ ոճի ըմբշամարտ	19	1
2	Ֆուտբոլ	37	3
3	Սամբո	45	1
4	Շախմատ	23	1
5	Ձյուղո	8	1
6	Բռնցքամարտ	16	1

Մարզադպրոցի պատանի մարզիկները մասնակցել են ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարության և առանձին ֆեդերացիաների կողմից կազմակերպված մարզական միջոցառումների և հուշամրցաշարների (ֆուտբոլ, շախմատ, սամբո, ձյուղո, ազատ ոճ, ըմբշամարտ, բռնցքամարտ), բազմիցս դարձել հաղթողներ և մրցանակակիրներ:

Սպիտակցի մարզիկները մեծ հաջողությունների են հասել Հայաստանի Հանրապետության, Եվրոպայի և աշխարհի առաջնություններում ու միջազգային հուշամրցաշարերում: Հատկապես վերջին 3 տարիներին ՀՀ առաջնություններում նրանք նվաճել են 27 ոսկե մեդալ, Եվրոպայի առաջնությունում ունեցել ենք 4 չեմպիոն, 2 արծաթե և 2 բրոնզե մեդալակիրներ, աշխարհի առաջնություններում 2 ոսկե /աշխարհի գավաթ/ 1 բրոնզե մեդալ, միջազգային հուշամրցաշարներում բազմաթիվ հաղթողներ և մրցանակակիրներ:

Հիմնախնդիրներ, նախապեսվող ծրագրային միջոցառումներ

- Շենքի նկատմամբ իրավունքի ձեռքբերում:
- Առաջին մասնաշենքի վերանորոգում:
- Ջեռուցման համակարգի փոխում:
- Սանհանգույցների և լողասենյակների վերանորոգում:
- Գույքի ձեռքբերում:
- Լողավազանի վարձակալություն, լող մարզաձևի կազմակերպում:
- Ֆիզիկական կուլտուրայի և առողջ ապրելակերպի արմատավորման ոչ բավարար մակարդակ:

1.24 ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ԾՐԱԳՐԵՐԸ

Հանրապետական և մարզային ծրագրեր

Քաղաքաշինության ոլորտում

Երկրաշարժի հետևանքով աղետի գոտում անօթևան մնացած ընտանիքների բնակարանային ապահովման պետական աջակցության ծրագրի շարունակական իրականացումը, 2017 թվականին Սպիտակ համայնքում ծրագրի ավարտը:

Քաղաքաշինական ոլորտում թույլտվությունների ստացման էլեկտրոնային համակարգի ամբողջական գործարկումը:

2017-2021 թվականների ընթացքում հանրապետության բնակավայրերին գլխավոր հատակագծերով ապահովելու խնդրի ամբողջական լուծումը:

Սպորտի և երիտասարդության ոլորտում

Տարածքային համաչափ զարգացման համատեքստում երիտասարդական ծրագրերի էական ավելացում համայնքում, ինչպես նաև երիտասարդության հիմնախնդիրների լուծման գործընթացներում երիտասարդների ներգրավածության մակարդակի բարձրացում:

Ներդրումների խրախուսման և պաշտպանության նպատակով

Ներդրումային ծրագրերի ֆինանսավորման աջակցության նպատակով պետության կողմից ներդրումային ֆոնդի ձևավորում՝ հետագայում պետություն-մասնավոր հատված համագործակցությամբ գործող ֆոնդ ունենալու տեսլականով:

Վարկային և դրամաշնորհային ծրագրերով նախատեսվում է՝

- Շարունակաբար իրականացնել հանրակրթական դպրոցների, համայնքային ենթակայության երաժշտական, գեղարվեստի դպրոցների, մարզադպրոցի վերանորոգման աշխատանքներ՝ համապատասխան դոնորների ներգրավմամբ:
- Շարունակել և ավարտին հասցնել «Հաբիթաթ ֆոր Հյումենիթի Արմենիա» հիմնադրամի և Սպիտակի համայնքապետարանի համագործակցությամբ Եվրամիության հովանավորությամբ իրականացվող, «Վերականգնվող էներգիայի և էներգիայի արդյունավետ օգտագործման հնարավորությունը Սպիտակ և Վայք քաղաքներում» ծրագիրը, որի արդյունքում կվերանորոգվեն համայնքի 27 բազմաբնակարան շենքերի տանիքները, կփոխվեն այդ շենքերի շքամուտքերի պատուհաններն ու դռները, կտեղադրվեն արևային մարտկոցներ:
- Ավարտին հասցնել «Տաշիր» բարեգործական հիմնադրամի հովանավորությամբ սկսած, 150 երեխայի համար նախատեսված նոր մանկապարտեզի շենքի շինարարական աշխատանքները:
- Մշակույթի նախարարության հետ մշակել և իրականացնել Սպիտակ համայնքի «Կենտրոն» և «Հացավան» թաղամասերն իրար կապող տեղական նշանակության հուշարձան-կամուրջը հիմնանորոգելու ծրագիր:
- «Ֆոկլուս օն չիլդրեն նաու» կազմակերպության հետ համագործակցությամբ թիվ 2 մանկապարտեզի համար կառուցել նոր խաղահրապարակ:
- Ավարտին հասցնել Հյուսիս-Արևմտյան (փախստականների) թաղամասի գազաֆիկացման և լուսավորության համակարգի կառուցման աշխատանքները:
- Շարունակել ՄԱԿ-ի զարգացման ծրագրի հայաստանյան գրասենյակի (ՄԱՀԾ), հետ համագործակցությամբ, «Քաղաքային կանաչ լուսավորություն» ծրագրի շրջանակներում քաղաքային լուսավորության համակարգերի արդիականացման աշխատանքները, էներգետիկ արդյունավետության հիմնախնդիրների լուծումը՝ ծախսարդյունավետության բարձրացման

նպատակով: Ծրագրի շրջանակներում իրականացնել նաև Սուրբ Հարություն եկեղեցու արտաքին լուսավորության աշխատանքները:

- Սահմանված կարգով կազմել և հաստատել համայնքի քաղաքաշինական նոր ծրագրային փաստաթղթերը՝ գլխավոր հատակագիծը և քաղաքաշինական գոտիավորման նախագիծը:
- Միջոցներ ձեռնարկել միջազգային շահագրգիռ կազմակերպությունների օժանդակությամբ Սպիտակում ագրոտուրիզմի զարգացման ուղղությամբ:
- Կարևորելով միջազգային համագործակցությունը որպես համայնքի արդյունավետ զարգացման բաղադրիչ, համայնքապետարանը կշարունակի համագործակցային ծրագրերին մասնակցելու աշխատանքները տարբեր ձևաչափերով:

ՄԻՋՀԱՄԱՆՔԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐ

Հանրապետության մի շարք համայնքների հետ նախատեսվում է իրականացնել հետևյալ ծրագրերը՝

- Համագործակցող կողմերի փոխադարձ այցերի կազմակերպում:
- Փորձի փոխանակում:
- Տեխնիկական, նյութական աջակցության ցուցաբերում:
- Մարզամշակութային ծրագրերի ու միջոցառումների իրականացում:

1.25 ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՈՒԺԵՂ ԵՎ ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐԻ, ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՍՊԱՌՆԱԼԻՔՆԵՐԻ (ՈՒԹՀՍ) ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Սպիտակ համայնքի զարգացումն ապահովող միջոցառումների մշակման և իրատեսական արդյունքների հասնելու համար իրականացվել է համայնքի ուժեղ և թույլ կողմերի, արտաքին միջավայրի կողմից ընձեռնված հնարավորությունների և սպառնալիքների գնահատում և SWOT (ՈՒԹՀՍ) վերլուծություն

Աղյուսակ 1.25.1

ՀԱՄԱՅՆՔԻ ՈՒԺԵՂ ԿՈՂՄԵՐԸ	ՀԱՄԱՅՆՔԻ ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐԸ
- Համայնքի աշխարհագրական դիրքը (Մ3, Մ7 միջպետական նշանակության ավտոմայրուղիները, երկաթգիծ առկայությունը), - Համայնքի գազաֆիկացվածության աստիճանը, - Հեռախոսակապի և հեռուստակայանի, ինտերնետ կապի առկայությունը, - Առևտրի և սպասարկման հիմնական օբյեկտների առկայությունը, - Խմելու ջրի ներհամայնքային համակարգի առկայությունը համայնքի տարածքով հոսող Չիչխան գետի առկայությունը, - Լավ կազմակերպված վարչակազմ՝ ներդրողներին օգնելու և ուղղորդելու համար, - Բարձրագույն կրթությամբ մասնագետների առկայությունը, - Առողջապահական և կրթական հաստատությունների բավարար քանակ, բնագավառներում որակյալ կադրերի առկայություն, - Տեխնիկական բավարար ապահովվածություն ունեցող առողջապահական կառույցների առկայություն, - Արտադրարտարական հաստատությունների առկայություն,	- Ներհամայնքային ճանապարհների, փողոցների վատ վիճակը, - Համայնքում բնակելի տների, հասարակական և արտադրական կիսակառույցների առկայություն, - Գործազրկության բարձր մակարդակ, - Սոցիալապես անապահով ընտանիքների առկայություն, - Անօթևան բնակարանի կարիքավոր ընտանիքների առկայություն, - Ժամանակավոր տնակներում հակահրդեհային անվտանգության պայմանների ապահովման բացակայություն, - Այգեստան թաղամասում և Քըր-Քըրքորյան փողոցի ջրահեռացման համակարգերի/կոյուղագծերի/ բացակայություն, - Ոռոգման ներհամայնքային համակարգի ոչ բավարար վիճակը, - Գյուղատնտեսական մթերքների վերամշակման կառույցների բացակայությունը, - Մարզադաշտի բացակայությունը, - Ֆինանսական ռեսուրսների սակավությունը, - ՆՈՒՀ-ի անբավարար քանակը,

